կոթը պետք է պահի աջ կողքի մոտ փամփշախ
պայտուսակի վրա (առանց կոթը մեջքի կողմից
դուրս հանելու), փողաքերանը դեպի նպատակը,

և աջ ձեռքով բռնում և ազատաբե ձախց բռան մեջ
առած, իսկ ձախտի մոտավորապես նշանցի
տակից Հրացանը լցնում և և հաստում և (ստու-
ղում և) նշանոցը, վորից հետո աջ ցուցամատը
մտցնում և ձգանի կամրջակի մեջ, մատը առանց
ձգանին կայցնելու (Նկ. 24):

բ) «ԿՐԱԿ» կամ «ՀԱՄԱԶԱՐԿՈՎ»... (համա-
դարկով հրաձգութեան ժամանակ) հրամանով—
ձեռքերի արագ շարժումով բարձրացնում և հը-
րացանը և նշան և բռնում, հրացանի կոթի խզա-
տակը պինդ սեղմելով աջ ուսի փոսին (Նկ. 25),
վորից հետո սահուն կերպով սեղմում և չքանը և
իջեցնում հրահանը (համադարկով հրաձգութեան
ժամանակ ձիգը կատարվում է: «ԿՐԱԿ» հրա-
մանով):

Հրացանի կոթը դեպի ուսը բարձրացնելու ժա-
մանակ հրացանը պետք է ազատ սահի ձախ ձեռ-
քի ափի միջով:


54. «ԾՆԿԻՑ» դրուժյամբ հրաձգութեան
համար հրաձիգը՝

ա) Ծնկից—«ԼՅՐՈՒ» հրամանով—աջ վրաք
յետ և տանում և, իջնելով աջ ծնկի վրա, նստում
և տակը դրած կրնկի վրա (Նկ. 26): Ձախ ծոնակն
ոգտազորժում և վորպես հենարան ձախ ձեռի ար-
մունկի համար, ընդվորում արմունկը մի քիչ
իջեցվում է: Հրացանը պետք է բռնել աջուպես,
ինչպես կանգնած դրուժյան ժամանակ:

բ) «ԿՐԱԿ» հրամանով արվում է նույնը, ինչ
վոր կանգնած արձակելու ժամանակ. ձախ ար-
մունկը հենում և ձախ ծնկին, ընդվորում կարիք

չկա արմունկը ծնկոսկրի վրա հենելու, այլ պետք է շարժել այն դեպի առաջ, յետ կամ դեպի մի կողմը, ինչպես ասվելի 4-րդ մասը է (Նկ. 27):

Դահուկների վրա ծնկից դրուժյամբ հրաձգության ժամանակ, աջ դահուկի ծայրը պետք է դարձնել դեպի աջ և յետևի ծայրը դնել ձախ




Նկ. 25

դահուկի կրնկի վրա: Մարտիկը դնում և աջ ծունկին աջ դահուկի վրա: Զոդերը պետք է ձախ կողմը դնել:

55. «ՊԱՌԿԱՆՑ» ԴՐՈՒԹՅԱՄԲ ՀՐԱՉԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ «ԼՅՐՈՒ—ՊԱՌԿԱՆՑ» հրամանով հրաձիգը պառկում է կես-աջ դեպի նպատակը, յերեսի վրա դետնին ընկած և հենվում է յերկու արմունկի վրա. քանի դեռ հրաձգությունը չի սկսված, հրացանի կոթի անկյունը կարելի յե


հենել դետնին կամ դնել սվինի և իսկադակի բռնակի վրա (Նկ. 28):

«ԿՐԱԿ» հրամանով հրացանն առաջ է տարվում և դեմ արվում աջ ուսին, ընդվորում ար-



Նկ. 26.

մունկները պետք է իրարից հեռացնել և հենել դետնին (Նկ. 29):



Նկ. 27.

Հրաձգության համար պառկած դրուժյունը—մարտում սովորականն է համարվում:

56. ԴԱՀՈՒԿՆԵՐՈՎ ՊԱՌԿԱԾ ՀՐԱԶԳՈՒ-
ԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ մարտիկը յերեսը դարձնում է
կրակի ուղղութեամբ կամ 60 աստիճան դառնում
և դեպի աջ: Առաջին դեպքում դահուկների առ-



Նկ. 28.

ջևի ծայրերը հեռացվում են իրարից, կրունկների
յետևի ծայրերը թողնվում են սեղում: Հրացանի
կռիթը հենելով աջ դահուկի վրա, իջնում է ձախ
ծնկի վրա: Դրա հետ միասին ձողերը ձախ ձեռ-
քով առաջ են դարձվում և դրվում են խոտոր-
նակի: Անցնում է փոքի վրա պատկած դրուժյան:



Նկ. 29

Ձախ ձեռքն աջնակն պետք է դնել ձողերի վրա,
վոր արմունկն ընկնի ձողերի արանքին:

Հրացանը դրվում է ձողերին խոտորնակ:
Նշանառութեան ժամանակ յերկու ձեռքի ար-
մունկներն ել պահել ձողերի արանքում: Յերկ-
րորդ դեպքում հրաձիգը պատկում է հող. 55-ի
ցուցմունքների համեմատ և ինչպես ստված է
վերևում:

57. ՁԵՆՔԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ: Աժեն անգամ
մարտական և սին փամփուշտներով հրաձգու-
թյունից հետո պետք է զենքի և սրայուսակների
գննություն կատարել:

Ստուգություն կատարելու համար հրաման
և տրվում «ՁԵՆՔԸ ՍՏՈՒԳՄԱՆ»:

Այդ հրամանով կանգնած դրուժյունից կրա-
կողները հրացանը վոտքի մոտ ունենալիս (յեթե
այլ դրուժյան մեջ են յեղել, այդ դեպքում նա-
խապես պետք է «ՎԵՐ ԿԱՅ» հրամանը տալ)
նույնպիսի շարժումով ինչպես լցնելիս, բաց են
անում փակադակը և հրացանը տալիս են ձախ
ձեռքը և տանում են դեպի ձախ ուսը, բացված
փակադակը պահելով դեպի դաշտի կողմը: Աջ
ձեռքով բաց են անում փամփուշտի պայուսակը:

Հրաձգությունը զեկավարող հրամատարն
ուշադրութեամբ գննում է փամփուշտանոցն և պա-
յուսակը և, համոզվելով, վոր նրանցում մար-
տական փամփուշտներ չկան, հրաման է տալիս
(վոտ-Քի՞), վորի համեմատ մարտիկը փակում է
փակադակը, իջեցնում է դարկանը և ընդունում
է հիմնական կեցվածքը:

Մարտական պարագայում զենքի գննությու-
նը կատարվում է հրամատարների հաջեցողու-
թյամբ:


3. ՍՎԻՆԱՄԱՐՏ

58. ՍՎԻՆԱՄԱՐՏԸ հանդիսանում է գրոհի
վճռական բույն: Սվինի հարվածին մինչև վեր-

ջին հնարավորութիւնը պետք է նախորդէ կը-
րակը:

Շեշտակի գրոհի գնացող մարտիկը, պետք
է վստահ լինի իր սլինի վրա և առաջ սլանա հա-
կառակորդին նրանով հարված տալու համար:

Սլինը—գիշերային մարտի գլխավոր գենըն
է:




Նկ. 30

Ուստի յուրաքանչյուր մարտիկ պետք է կա-
րողանա կռվել սլինով և բռնամարտում, վոր-
պետքի հնարավորութիւն ունենա մարտում ող-
տագործել կռվի բոլոր միջոցները, ամենամոտ
տարածութիւնների վրա:

59. ՄԱՐՏԱԿԱՆ ԿԵՑՎԱԾԻՆ (նկ. 30) ըն-
դունվում է «Ձեռ-Քի՛՛» հրամանով:

Այդ հրամանով մարտիկը հիմնական կեց-
վածքից (նկ. 17) մի նվազ հրացանն առաջ է ձը-
գում, ինչպես ցույց է արված 30-րդ նկարում:

Սլինի սուր ծայրն ուղղվում է դեպի հատակով
կանգնած հսկառակորդի բռակը, հրացանը պետք
է ամուր պահել յերկու ձեռքով: Վտարներն իրա-
րից հեռացվում են կարծես թէ մարտիկը նորմալ



Նկ. 31

քայլ է անում և հանդիպում դիմադրութեան.
ձախ ուսը պետք է մի քիչ առաջ տալ:

Ծանոթութիւն.—Յեթե գենքի սլին-
ները հանած են, «Ձեռ-Քի՛՛» հրամանից
առաջ և կարիքի դեպքում, սլինները
հազցնում են «ՍՎԻՆԸ ՀԱԳՅՐՈՒ» հրամա-
նով. սլինները հանվում են «ՍՎԻՆԸ Ի
ՊԱՏՅԱՆ» հրամանով:

«ԱՁԱՏ» հրամանով մարտական կեցվածքից
հրացանն իջեցնել ազատ մեկնած ձեռքերի վրա
դեպի ցած հորիզոնական դրութեամբ վտարներն
ուղղել ու տեղից չչարժվել:

Նորից մարտական կեցվածք ընդունելու հա-
մար հրաման տալ. «ՄԱՐՏԻ ՊԱՐՄԱՍ»:

60. «Առաջ—ԽՈՑԻՐ» (նկ 31) հրամանով հրա-
քացանք վոթրքան հնարադոր և պիճոք պահելով,
հրացանն ուժով առաջ նետել ամբողջովին մեկնած
ձախ ձեռքի յերկարությամբ, միաժամանակ, ամ-
բողջ իրանը դեպի առաջ տալով և աջ վոտն ուղ-
ղելով, ձախ վոտն արագ կես քայլ դեպի առաջ տա-
նել: Հրացանի կոթը մնում և աջ ձեռքի արմուն-
կի և իրանի արանքում:

61. ՅԵԹԵ ՀԱՐՎԱԾԸ ՏՐՎՈՒՄ Ե ՎՈՉ ՈՒ-
ՂԻՂ ԴԵՊԻ ԻՐ ԱՆՍՁ, այլ վորևե կողմ դարձու-
մով, վարող վոտն ընկոցի հետ միաժամանակ
դրվում և հարվածի ուղղությամբ «աջ (ձախ,
յետ) ԽՈՑԻՐ» հրամանով: Դարձումի ժամանակ
պետք և հրացանը պահել դեպի իրեն, ծալելով
ձախ ձեռքի արմունկը, այնպես վոր նրա դաստա-
կը ձախ ուսի առջևում և նրա բարձրության վրա
լինի:

62. ՍՎԻՆՈՎ ՀԱՐՎԱԾ ՏԱՆՈՒՑ ՀԵՏՈ
մարտիկն ընդունում և մարտական կեցվածք,
վարող վոտը կես քայլ յետ տանելով:

Դեպի վեր հարվածը կատարվում և 60-րդ
հոդվածի բացատրածի համեմատ:

63. «ՀԱՐՎԱԾՆԵՐԻ ԿԵՍԵՑՈՒՄԸ»: «ՅԵՏ
ՄՂԻՐ ԱՁ» հրամանով, մարտական կեցվածքից,
ուժով մեկնելով ձախ ձեռքը, պետք և յետ մղել
հակառակորդի գնդը դեպի աջ: Միևնույն ժամա-
նակ պետք և առաջ շարժվելով, հարված հասցնել
սվինով և ընդունել մարտական կեցվածք:

«ՅԵՏ ՄՂԻՐ ՁԱԽ», ՅԵՏ ՄՂԻՐ ԱՁ—ՎԵՐ
(վար) և «ՅԵՏ ՄՂԻՐ ՁԱԽ—ՎԵՐ (վար)» հրա-

մաները կատարվում են վերահիշյալի համեմա-
մատ:

«ՅԵՏ ՄՂԻՐ ՎԵՐ» հրամանով աջ ձեռքով ա-
րագ բարձրացնել հրացանի կոթը դլսի վերելը,
աջ ձեռքը պահելով վրի բարձրության վրա. այդ
դեպքում հրացանը դարձնել փողակալը դեպի վեր:

64. ՅԵԹԵ ՍՎԻՆԻ ՀԱՐՎԱԾՆ ԱՆ ՀՍՁՈՂ Ե
ՅԵՂԵԼ կամ յետ և մղվել, դրոհողը կարող և հրա-
ցանի կոթով խփել հակառակորդի գլխին, վոտքե-
րի արանքին, սրտի տակին, ձեռքին կամ մի այլ
անպաշտպան տեղին:

Հրացանի կոթով հարված կարելի յե կերպ-
ուել վոչ ամեն ժամանակ, ուստի մարտիկը պետք
և հարձարվի ձեռնամարտի այլ զանազան տեսակ-
ներին: Որինակ—յերբ մարտիկը բռնված և հա-
կառակորդի կողմից այնպես, վոր հնարավորու-
թյուն չկա դործադրելու վոչ սվինը, վոչ հրացա-
նի կոթը, վոտքերի արանքին ծնկով հարված տա-
լը կամ կրնկով վոտի թմբին հարվածելը կարող և
հակառակորդին խելույն անվնաս դարձնել:

4. ՆՌՆԱԿՆԵՐԻ ՆԵՏՈՒՄԸ

65. ՀԱՐՁԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ նոնակները
պետք և նետել քայլելիս: ՊՍՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿ նոնակներով պետք և դործել ծածկա-
րանի յետելից: ՅԵԹԵ հակառակորդի հետ մոտի-
կից ընդհարում և նախատեսվում, ձեռքի նոնակ-
ները պետք և նախապես պատրաստել դործելու
համար, համաձայն այն ցուցումների, վորոնք

բացատրված են «Հրաձգային գործի հրահանգում», «ՆՌՆԱԿՆԵՐԸ ԼՅՐՈՒ» հրամանով:

66. ՆՌՆԱԿԸ ՔԱՅԼԵԼԻՍ ՆԵՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ վերցնել հրացանը ձախ ձեռի տակ կամ «ուանիվար» ձախ ուսից կախած, վորպեսզի յերկու ձեռքն ել ազատ լինեն: Ապա վերցնել նոնակը և, մարտական դրուժյան բերելով այն, աջ ձեռքը թափահարել, ոտադակելով մարմնի ամբողջ շարժումով, ուժով նետել այն նպատակի վրա: Նետումը պետք է, ըստ հնարավորին, բարձր լինի, վորպեսզի նոնակըն ընկնի նպատակի վրա ուղղաձիգ կերպով:

Տեղից նոնակ նետելու ժամանակ, յիժե հընարավոր է հրացանը դնել գետնին կամ դեմ անել թաքստոցին և նոնակը ձգել, ինչպես բացատրված է վերեպում:

Ձեռքի նոնակներով կրակ բանալու համար հրաման տալ. «Ձեռքի նոնակներով հրակ»:

Ձեռքի նոնակները, դատարկելու համար հըրաման տալ «ԴԱՏԱՐԿԵԼ ՆՌՆԱԿՆԵՐԸ»:

67. ՀՐԱՑԱՆԱՅԻՆ ՆՌՆԱԿՆԵՐԻ ՆԵՏՈՒՄԸ կատարում են յերկու մարդ-նոնաձիգը և նրա ոգնականը, վորոնք նոնակ նետելուց ազատ ժամանակ գործում են վորպես հրաձիգներ:

Պաշտպանության ժամանակ հրացանային նոնակներով հրաձգությունը կատարվում է անմիջապես խրամատներից և խոր ծածկարաններից:

Հարձակման ժամանակ—պատահական փոսերից, արկերի բացած ձազարներից, բլրակների և քողարկների յետեվից, վորոնք հնարավորություն

են տալիս նոնաձիգին և նրա ոգնականին իրենց Հճալտարերել (ծնկի վրա դրուժյունից):

68. ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԵԼԸ: Կըրակ բանալու համար նոնաձիգը պարտավոր է՝

ա) աչքաչափով վորոշել մինչև նպատակը յեղած հեռավորությունը և հաղորդել իր ոգնականին, փողակը հաստելու համար:

բ) հրացանից սվինը հանել, նրա փոխարեն ամրացնել հրասանդը և փողի վրա հագցնել հըրացանի բարձրության հարկավոր անկյունը վորոշելու համար հարմարանքը (կվադրանտը կապարալարով):

գ) հրացանի կոթը հենել գետնին և նրա փողաբերանը ցածացնել այնպես, վոր ոգնականին հարմար լինի նոնակը, դնել հրասանդի մեջ:

դ) փողաբերանը մի քիչ բարձրացնել, վորպեսզի նոնակը մտնի հրասանդի մեջ մինչև դեմ առնելը, ապա հրացանն ուղղել նպատակին և լըցնել մարտական փամփշտով:

Միևնույն ժամանակ ոգնականը՝

ա) պալտասակից հանում է նոնակը և, առնելով ձախ ձեռքը, աջով պոկում է պահպանիչ թասակը:

բ) թուլացնում է սեղմիչ մանեկը, հեռակայական մասը դնում է հրամանով նշանակած բաժանման վրա, վոր համապատասխանի ցույց տըված հեռավորությունը, և նորից ամրացնում է մանեկը:

գ) ծակում է կամ բաց է անում հրածակի մազաղաթը,

բացատրված են «Հրաձգային գործի հրահան-
գում», «ՆՌՆԱԿՆԵՐԸ ԼՅՐՈՒ» հրամանով:

66. ՆՌՆԱԿԸ ՔԱՅԼԵԼԻՍ ՆԵՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ
վերջնել հրացանը ձախ ձեռի տակ կամ «ուսնիվար»
ձախ ուսից կախած վորպեսզի յերկու ձեռքն ել ա-
դատ լինեն: Ապա վերջնել նոնակը և, մարտական
գրուկյան բերելով այն, աջ ձեռքը թափահարել,
ոժտդակելով մարմնի ամբողջ շարժումով, ուժով
նետել այն նպատակի վրա: Նետումը պետք է,
ըստ հնարավորին, բարձր լինի, վորպեսզի նոնա-
կըն ընկնի նպատակի վրա ուղղաձիգ կերպով:

Տեղից նոնակ նետելու ժամանակ, յեթե հը-
նարավոր է հրացանը դնել դետնին կամ դեմ ա-
նել թաքստոցին և նոնակը ձգել, ինչպես բացա-
տրված է վերեվում:

Ձեռքի նոնակներով կրակ բանալու համար
հրաման տալ. «Ձեռքի նոնակներով հրԱԿ»:

Ձեռքի նոնակները, դատարկելու համար հը-
րաման տալ «ԴԱՏԱՐԿԵԼ ՆՌՆԱԿՆԵՐԸ»:

67. ՀՐԱՑԱՆԱՅԻՆ ՆՌՆԱԿՆԵՐԻ ՆԵՏՈՒՄԸ
կատարում են յերկու մարդ-նոնաձիգը և նրա
ոգնականը, վորոնք նոնակ նետելուց ազատ ժա-
մանակ գործում են վորպես հրաձիգներ:

Պաշտպանության ժամանակ հրացանային
նոնակներով հրաձգությունը կատարվում է ան-
միջապես խրամատներից և խոր ծածկարաննե-
րից:

Հարձակման ժամանակ—պատահական փոսե-
րից, արկերի բացած ձաղարներից, բլրակների և
քողարկների յետեվից, վորոնք հնարավորություն

են տայիս նոնաձիգին և նրա ոգնականին իրենց
չհայտաբերել (ծնկի վրա դրուկյունից:

68. ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԵԼԸ: Կը-
րակ բանալու համար նոնաձիգը պարտավոր է՝

ա) աչքաչափով վորոշել մինչև նպատակը յե-
ղած հեռավորությունը և հաղորդել իր ոգնակա-
նին, փողակը հաստելու համար:

բ) հրացանից սվինը հանել, նրա փոխարեն
ամրացնել հրասանդը և փողի վրա հա գցնել հը-
րացանի բարձրության հարկավոր անկյունը վո-
րոշելու համար հարմարանքը (կվադրանտը կա-
պարալարով):

գ) հրացանի կոթը հենել գետնին և նրա փո-
ղաբերանը ցածացնել այնպես, վոր ոգնականին
հարմար լինի նոնակը, դնել հրասանդի մեջ:

դ) փողաբերանը մի քիչ բարձրացնել, վոր-
պեսզի նոնակը մտնի հրասանդի մեջ մինչև դեմ
առնելը, այս հրացանն ուղղել նպատակին և լըց-
նել մարտական փամփշտով:

Միևնույն ժամանակ ոգնականը՝

ա) պայտասակից հանում է նոնակը և, առնե-
լով ձախ ձեռքը, աջով պոկում է պահպանիչ թա-
սակը:

բ) թուլացնում է սեղմիչ մանեկը, հեռակա-
յական մասը դնում է հրամանով նշանակած բա-
ժանման վրա, վոր համապատասխանի ցույց տը-
ված հեռավորությունը, և նորից ամրացնում է
մանեկը:

գ) ծակում է կամ բաց է անում հրածակի
մադաղաթը,

դ) նոնակը դնում է իջեցրած հրասանդի մեջ, հետեվելով, վոր նրա յելունները մանեն ակոսների մեջ, և

զ) անցնում է հետեվյալ նոնակի պատրաստմանը:

69. ՆՇԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՁԻԳԻ ԺԱՄԱՆԱԿ հրացանի կոթը մնում է դետնին հենված: Ձաջ ձեռքով պետք է հրացանը պահել փողակալը բռնած աղուստի ցածի ողակի վերելում, իսկ աջով—ձգանի կամբջակի մոտից, բութ մասը պահելով ձգանի վրա:

Հորիզոնական նշանառությունը կատարվում է հրացանի փողը տեղաշարժելով նպատակի ուղղությամբ:

Ուղղաձիգ նշանառության (հրացանին բարձրացման անկյուն տալու) համար ծառայում է կլապերանսը կապարալարով: Հրացանը պետք է այնպես ուղղել, վոր կապարալարի ցուցիչը համադրվի կլապերանսի այն խազի հետ, վորի դիմաց նշանակված է մինչև նպատակը վորոշված հեռավորությունը:

Նշանառությունը ճիշտ դտնելուց հետո նրանաձիգը բութ մատով սեղմում է ձգանին և ձիգ է կատարում, վորից հետո անմիջապես ցածրացնում է հրասանդը լքեպի ողնականը նորից լցնելու համար: Դրա հետ միասին նա հետեվում է նոնակի թուխքին և պայթմանը, ստուգելով հեռավորությունը վորոշելու և նշան բռնելու ճշտությունը:

70. ՀՐԱԶԳԱՅԻՆ ՆՈՆԱԿՆԵՐՈՎ ԿՐԱԿ վարելու համար պետք է հրաման տալ.

ա) նոնանետը լցնելու համար—«Այսինչ նրպառակին նոնանետը ԼՅՐՈՒ»,

բ) կրակ բանալու համար—«նոնանետ ԿԼՐԱԿ» (կամ «այստան նոնակ, ԿՐԱԿ»,

գ) դատարկելու համար—«նոնանետը ԴԱՏԱՐԿԻՐ»:

5. ՁԵՌՔԻ ԳՆԴԱՑԻՐ


71. ՅԵՐԹՈՒՄ ԳՆԴԱՑԻՐԸ կրում են մեջքին, ուսին կամ ուսնիվար դրությամբ (ջոկի բոլոր մարտիկները փոխ առ փոխ, ջոկի հրամատարի ցուցումով) կամ տանում են փամփշտի յերկանիվի վրա բարձած:

Տեղում դասավորման ժամանակ, ձեռքի դրնդացրով հիմնական կեցվածքը նույնն է, ինչ վոր հրացանով. «ուսնիվար» հրամանով նշանառուն (ջոկի մի այլ մարտիկ) զնդացիրը վերցնում է վերոհիշյալ դրություններից մեկի ձեվով:

72. ՀՐԱԶԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Ձեռքի գնդացրով հրաձգության համար հիմնական դրությունը—նեցուկի վրայից պակած կրակելն է (նկ. 32): Հրամար հնարան յեղած դեպքում հրաձգությունը հնարավոր է նույնց պես ծնկից և կանգնած, իսկ ծայրահեղ անհրաժեշտության դեպքում (հանկարծակի զրոհ, հեծելատության դեպքում (հանկարծակի զրոհ, հեծելատության դեպքում) թույլատրվում է կրակել նաև վազեվազքի ժամանակ քայլելիս:

73. ՊԱՌԿԱՄ ՀՐԱՉԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ նշանա-
ռոտն ամբողջի անդ է ընտրում, վոր հնարավոր լի-
նի զնդացիքը հավասար դնելու և ինքն ել հարմար
կերպով տեղավորվի նրա յետեվում:

Մտտենալով այն տեղին, վորը նկատի յե առ-
նված զնդացրով կրակ վարելու համար, նշանա-
ռոտն պետք է արդեն պատրաստ պահի զնդացիքը



Նկ. 32

հաստելու համար. վաղեվադրի ժամանակ զնդա-
ցիքը պահում են հորիզոնական դրուժյամբ աջ
կողմից:

Հրաձգության համար նշանակված տեղին
հասնելուց հետո, նշանառոտն ցած է դնում զըն-
դացիքը, հենելով նեցուկները և կոթի անկյունը
գետնին, և նեցուկների ծայրերը հավասար չափով
գետնի մեջ խրելով մինչև հենարանը, վորից հե-
տո պառկում է զնդացրի յետեվում:

Դրա հետ միաժամանակ նշանառուի ողնա-
կանը, տեղավորվելով զնդացրի աջ կողմում,
պատրաստում է վերամբարձը, տեղն է դնում այն
և ապա պառկում է զնդացրի աջ կողմում և պատ-

րաստում է պահեստարանը (զնդացրի ժառանգե-
նք):

Նշանառուն ստուգում է հաստելու ճշտու-
թյունն և զնդացրով գործելու հարմարությունը:

Ծնկից և կանգնած՝ դրուժյունից կրակի
պատրաստվելը հնարավոր է հարմար հենարան
յեղած դեպքում:

74. ԳՆԴԱՑԻՐԸ ԼՅՆԵԼՈՒ ՅԵՎ ԿՐԱԿ ԲԱ-
ՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ պետք է հրաման ստլ.

1) «Այսինչ նպատակին ԼՅՐՈՒ» (Հատ-հատ
ԼՅՐՈՒ»):

2) «Տարը» (նշանոցի բարձրությունը):

3) «Ուղղանն այսինչ տեղը, այսքան» (ուղ-
ղան ունեցող սիստեմներում):

4) «Նշան բռնել այսինչ տեղը»:

5) «ԿՐԱԿ» (կամ «կարմատև հերթերով ԿԸ-
ՐԱԿ», «ամբողջատ ԿՐԱԿ»):

Այդ հրամանով հաստում են զնդացիքը,
լցնում են, դնում են նշանոցն և նշան բռնելուց
հետո կրակ են բաց անում:

75. ՁԵՌՔԻ ԳՆԴԱՑՐՈՎ ԿՐԱԿ ԵՆ ՎԱ-
ՐՈՒՄ՝ ա) նորմալ հերթերով 4-6 ձիգով, բ) կարճ
հերթերով 2-3 ձիգով, գ) անընդհատ, մինչև
պահեստարանի փամփշտների պաշարի սպառվե-
լը կամ, նույն պարագային, ինդիքը կատար
ածելով կամ մինչև կրակը դադարեցնելու պատ-
վերը, դ) հատ-հատ ձիգերով:

Գնդացրի կրակի սովորական ձևը հանդի-
սանում է նորմալ հերթերով կրակն անհրաժեշտ
կանգառումներով և ձիգա նշանառությունը սաստ-
կելու և վերականգնելու համար, պահեստարան-

ները փոփոխելու համար, խափանումները վերացնելու և փողը պաղեցնելու համար:

Կարն հերթերով հրաձգությունը կիրառվում է մարտում, յերբ նպատակը կարող է հարվածովել փոքրաթիվ ձիզերով, և փորձնական հրաձգության ժամանակ:

Անընդհատ կրակը կարելի չէ թույլատրել մարտի առանձին ճգնաժամային լուպեներին միայն:

Հատ-հատ ձիգերով հրաձգությունը ձեռի դնդացրով կերտում և մարտում վտրպես բացառություն, գնդացրի դասավորության սեղն և ներկայությունը թագցնելու նպատակով և մտտի տարածություններին ամենափոքր նպատակները դնդակոծելու ժամանակ:

76. ԿՐԱԿԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԴԱԴԱՐԵՅՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ հրաման տալ. «գնդացիր ԿԱՆԳԱՒ»:

Նշանատուն դադարում է կրակելուց, ուշադրությամբ սպասելով ջոկի հրամատարի հետեվյալ հրամանին: Դրա համար հարկա՛յոր է դադարել ձգանը սեղմելուց և գնդացրի կոթն իջեցնել դետնին (հենարանի վրա):

Ժամանակավորապես կրակը դադարեցնելու համար, յերբ հարկավոր է դնդացրը պատահական ձիզից անվտանգ դարձնել, հրաման տալ. (այն սխտեմներում, վորոնք այդ թույլ կտան). «ՓԱԿԱՆՔԸ ՅԵՏ ԳՅԻՐ»:

77. ՁԵՌՔԻ ԳՆԴԱՅԻՐԸ ԴԱՏԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ, հրաման տալ, «ԼԻՅԸ ՀԱՆ»:

Նշանատուն, գնդացրի կոթը գետնին (հենարանի վրա) իջեցնելուց և նշանոցն և ուղղանը մշտական հաստման վրա դնելուց հետո ողնականի հետ միասին դադարկում է գնդացրը:

Նշանատուն և ողնականը, գնդացրը դադարելուց հետո, հալաքում են պահուելի մասերը, պատկանելիքներն և պահեստարանները, և մընում են իրենց տեղում թագնված:


78. ՈՂԱՅԻՆ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՎՐԱ ՀՐԱՉԳՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ձեռքի գնդացրը հրաձգության ընթացքում պահելու համար կարող է ծառայել ամեն տեսակի բարձր հենարանը:

6. ՀԱԿԱԳԱՁԵՐ ԿՐԵԼՆ ՈՒ ՊԱՇԵԼԸ


79. ԲՈԼՈՐ ՄԱՐՏԻԿՆԵՐՆ ՈՒ ՊԵՏ ԿԱՁՄԸ ՊԵՏՔ Ե ԿԱՐՈՂԱՆԱՆ ՀԱԿԱԳԱՁԵՐԻ ՀԵՏ ՎԱՐՎԵԼ. նրանք, ըստ հնարավորին, պետք է պրազ հագնեն, շարվեն և հակադազ հազած գենքով դործեն:

80. ՀԱԿԱԳԱՁԵՆ ՈՒՆԻ ՀԵՏԵՎՅԱԼ ԲԱՂԱԴՐԻՉ ՄԱՅԵՐԸ. Հակադադային տուփը միայած է դիմակի հետ ծալքավոր (հարմոնիկաձև) ուտինն խողովակի ողնությամբ: Այդ խոխովակի վերին ծայրին ամրացած է մետաղե նախափողակ—յերեք տակ, վորի մի ծայրին հագցրած է ծալքավոր խողովակը, մյուսին—դիմակը, իսկ յերբորդին—ուտինն արտաշնչման կախույր, վորը սովորաբար տեղավորված է մետաղե ազուցարանի մեջ: Հակադադի թողոր մասերը գտնվում են բրեդնտե սրայուսակում, վորն ունի յերկու

բաժանմունք. նրանցից մեկում տեղավորվում և հակադադաշին տուփը, իսկ մյուսում զինակը (կոբոլակը): Պայուսակին ամրացած են. 1) ուսափոկը, փորի վրա կրում են պայուսակը, ավզուկներով, փորձը հնարավորության են տալիս կանոնավորել նրա յերկարությունը, և



Նկ. 33.



Նկ. 34.

2) փոքրիկ մետաղե աղեղնակներ և քուշ, փորձնց ողնությամբ պայուսակը կարելի չե կապել մարտիկի մարմնին: Պայուսակը հաղնում են հանդերձանքի վերևից:

81. ՀԱԿԱԳԱԶԸ ԿԱՐՈՂ Ե ԳՏԵՎԵՆ ԵՐԻԿՐ ՂՐՈՒԹՅԱՄԲ.

1) «Երկրակամ» (ոգնով դրած պայուսակի

մէջ (նկ. 33) — քիմիական հարձակման անմիջական փոփոխի բացակայութեան պայմաններում:

2) «պատրաստի» (նկ. 34) — այդպիսի փոփոխի սակայութեան դեպքում և

3) «մարտական» (նկ. 35) — հակադադը հագած և:



Նկ. 35



Նկ. 36.

82. «ՊԱՏՐԱՍՏԻ ԴՐՈՒԹՅԱՆ» (նկ. 34) հակադադերը փոխադրվում են յերթական դրությունից, «ՀԱԿԱԳԱԶԵՐՆ Ի ՄԱՐՏ» հրամանով, հետևյալ նվազների ողնությամբ.

Առաջին. ձախ ձեռքը մտցնում են ուսափոկի սակ և ազատում են նրա տակից, իսկ պայուսակն ուսափոկի հետ միասին վզի վրա տեղափոխում են իրանի առաջին մասի վրա (նկ. 36):

Յերկրորդ. այդպիսիների տեղափոխելու սպասությամբ ուսանողների յերկարութեամբ կարճացվում է և պայուսակը ձգվում է դեպի վեր աջպես, վոր նա իր ցածի մասով հասնի գոտու բարձրութեան:

Յերրորդ. պայուսակը կախույնն սղատում են, բայց չեն բացում:

Չարրորդ. պայուսակը պլնդ ամբացվում է իրանին զգի սղնութեամբ:

Յեթե գլխարկը պինդ ամբացած է դլխին (որինակ, կարմիր բանակայինի կորդակը ստանամանիք յեղանակին), այդ դեպքում հակազազը «պատրաստի» դրութեան փոխելիս, գլխարկը պետք է պատրաստ լինի արագ հանելու համար (որինակ՝ կորդակի վզի կոճակը պետք է դուրս դցած լինի):

83. ՀԱԿԱԳԱԶ ՀԱԳՆԵԼԸ «պատրաստի» դրութեանից կատարվում է «ԳԱԶԵՐ» հրամանով կամ ազդանշանով, հետևյալ նախների ողնութեամբ.

Առաջին. հանում են գլխարկը և դնում վտռերի արանքը կամ դնում են իրենց մոտ. յեթե ձեռքին հրացան կամ վորե է այլ ստարկա կա, այդ դեպքում դրանց նախապես դնում են (կանդնեցնում են) իրենցից մոտ:

Յերկրորդ. պայուսակը կախույնը բարձրացնում են, դիմակը հանում են պայուսակից:

Յերրորդ. դիմակը հագնում են գլխին, վորի համար յերկու ձեռքով բռնում են դիմակի հաստ յեզրերից աջապես, վոր դեպի ցած դարձած բութ մատերը, լինեն դիմակի կցակի մասի դրախ կող-

մից նրա յերկայնակի կարի կողքերին, լուկ մասցած մատները—նեբոի կողմից—ապա դիմակի մեջ են դնում կցակը և, մատները դիմակի յեզրով ցածից դեպի վեր շարժելով, գզուշութեամբ քաշում են գլխին այն հաշվով, վոր ակնոցներն ընկնեն աչքերի դիմաց և դիմակի վրա ծալքեր չլինեն, յեթև դիմակի ակնոցները միանդամից չնկնեն աչքերի դիմաց կամ ակնոցների շրջանակները սեղմում են կամ թե չե դիմակի վրա շատ փոթեք են ստանցել, այդ դեպքում պետք է շտկել դիմակը, դքուշութեամբ տեղաշարժելով և ուղղելով այն ձեռքի ակներով, դիմակի կցակի մասը չսխալ է սեղմի բուկը:

Չարրորդ. դնում են գլխարկը և վերցնում դին գրած հրացանը:

Յերթական դրութեանից անմիջապես հակազազն հաշնելու անհրաժեշտութեան դեպքում պայուսակը հարձակոցվում և ամբացվում է ամենից վերջը:

84. ՀԱԿԱԳԱԶ ՀԱՆԵԼԸ կատարվում է «ՀԱԿԱԳԱԶԵՐԸ ՀԱՆ» հրամանով:

1) Հանում են գլխարկը և դնում վտռերի արանքը կամ իրենց մոտ. դնում են (պատկեցնում են) իրենցից մոտիկ հրացանը կամ վորե է այլ ստարկան, յեթև նրանք խանգարում են հակազազը հանելուն:

2) Գլխից հանում են դիմակը. դրա համար ձեռքերի բութ մատները մացնում են ականջների մոտ դիմակի հաստ յեզրի տակը, և գզուշութեամբ հանում են դիմակը:

3) Դնում են գլխարկը:

4) Դիմակը չորացնում են, վորի համար այն շուր են տալիս հակառակ կողմը, և վերջինս չորացնում են թաշկինակով կամ վորեւե փափուկ լաթով:

5) Դիմակը սկզբից ծալում են յերկարությամբ, իսկ հետո խոտորնակի, այն հաշվով, վոր ակնոցները ամեն կողմից ծածկված լինեն ուտինով:

6) Ծալած վիճակում դիմակը նախափողակյերեքտակի, արաաշնչման կափուլքի ծալքավոր խողովակի մեծ մասի հետ միասին դարսվում և պայուսակի մեջ. պայուսակի կափուլքը չեն կոճկում. յեթե հակադազը փոխում են «պատրաստի» դրության, և կոճկում են—յերթական դրության փոխելու ժամանակ: Վերջին դեպքում բացի դրանից, աղատում են քուղը և կծկված վիճակում դնում են պայուսակի մեջ, այս համապատասխան կերպով յերկարացնում են ուսափուկը և պայուսակը տեղափոխում ձախ կողքը:

ԳԼՈՒՆ ԶՈՐՐՈՐԳ

ՀՐԱՄԱՍԱՐԻ ՑԵՎ ԱՆՈՒԻ ԳՆԴԱՏՐԻ ԶՈՎ

1. ԸՆԳՀԱՆՈՒՐ ՑՈՒՅՈՒՍՆԵՐ

85. ՀՐԱՄԱՍԱՐԻ ՏԵՂԸ: Դտեղելով դասակի բնդհանուր շարքում, ջոկի հրամատարը հրամաններ տալու համար շարքում իր անզը չի թողնում, այլ միայն գլուխը դարձնում և դեպի իր ջոկի կողմը:

Մյուս դեպքերում, այդ թվում նաև ջոկի կարգերում, հրամատարի անզը վորոշվում և ջոկի ղեկավարելու հարմարությամբ, դասակի հրամատարի և հարեան ջոկերի հետ ամենուրեք կազ պահպանելու հնարավորությամբ:

86. ՊԵՏԻՆ ԴԻՄԱԼՈՐԵԼՈՒ ՀՍՄԱՐ ԲՈՂՐԻ դեպքերում, յերբ դիմավորելու համար հրամանները հանուր և և տալիս և ամազ հրամատարը, ջոկի հրամատարը, (յեթե շարքից դուրս և յեկել) կանգնում և կանոնադրով իրեն համար շարքում վորոշված տեղը «Ընկեր կրամատարներ—ՏԵՂԵՐԻ» հրամանով:

Մյուս դեպքերում (գտնվելով դասակի կամ վաշտի մյուս ստորաբաժանումներից հեռու) ջոկի հրամատարը, յեկած պետին դիմավորելու համար հրաման տալուց հետո, մտանում և նրան հետևյալ գեկուցումով, «Այսինչ ջոկը կատարում և այսինչը (գրազվում և այսինչով)»:

87. ԶՈՎԻ ԵԱՐԳԵՐԸ

ա) միաշար սյուն, (դժանկար 1*) և 2),

բ) միատողան (դժանկար 3 և 4),

Ծանոթություն.—վաշտի վարչակազմ դասակի փամփշտակիրների և օանխտարեան ջոկերը, բացի հեշյալ շարքերից, կիրառում են դուզաշար սյունը:

ԶՈՎԻ ԿԱՐԳԵՐԸ:

*) 1-ին և բոլոր հաջորդ դժանկարների պայմանական նշանների բացատրությունը տես հովելված II.

4) Դիմակը չորացնում են, վորի համար այն չորս են տալին հակառակ կողմը, և վերջինս չորացնում են թաշկինակով կամ վորեւ իրափուկ լաթով:

5) Դիմակը սկզբից ծալում են յերկարությամբ, իսկ հետո խոտորնակի, այն հողջով, վոր ակնոցները ամեն կողմից ծածկված լինեն ակտինով:

6) Ծալած վիճակում դիմակը նախափողակյերեքտակի, արտաշնչման կափուլքի ծալքավոր խողովակի մեծ մասի հետ միասին դարսվում և պայուսակի մեջ. պայուսակի կափուլքը չեն կոճկում. յեթե հակադազը փոխում են հոլատրաստի՞ դրության, և կոճկում են—յերթական դրության փոխելու ժամանակ: Վերջին դեպքում բացի դրանից, աղատում են քուղը և կծկված վիճակում դնում են պայուսակի մեջ, տպա համապատասխան կերպով յերկարացնում են ուսփոկը և պայուսակը տեղափոխում ձախ կողքը:

ԳԼՈՒՆ ՉՈՐՐՈՐԿ

ՀՐԱՁԻԳ ՅԵՎ ԱՆՈՒԻ ԳՆԴԱՏՐԻ ԶՈՎ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՅՈՒՍՆԵՐ

85. ՀՐԱՄԱՏԱՐԻ ՏԵՂԷ: Իտնվելով դասակի բնգհանուր շարքում, ջոկի հրամատարը հրամաններ տալու համար շարքում իր տեղը չի թողնում, այլ միայն գլուխը դարձնում և դեպի իր ջոկի կողմը:

Մյուս դեպքերում, այդ թվում նաև ջոկի կարգերում, հրամատարի տեղը վորոշվում և ջոկի դեկավարելու հարմարությամբ, դասակի հրամատարի և հարեան ջոկերի հետ ամենուրայի կազ պահպանելու հնարավորությամբ:

86. ՊԵՏԻՆ ԴԻՄԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՍԱՐ ԲՈՂՐՐ դեպքերում, յերբ դիմավորելու համար հրամաններն ընդհանուր և և տալին և ավագ հրամատարը, ջոկի հրամատարը, (յեթե շարքից դուրս և յեկեկ) կանդնում և կանոնադրքով իրեն համար շարքում վորոշված տեղը «Բնկեր կրամատարներ—ՏԵՂԵՐԻ» հրամանով:

Մյուս դեպքերում (դանվելով դասակի կամ վաշտի մյուս ստորաբաժանումներից հեռու) ջոկի հրամատարը, յեկամ պետին դիմավորելու համար հրաման տալուց հետո, մտանում և նրան հետևելու զեկուցումով, «Այսինչ ջոկը կատարում է այսինչը (գրագվում է այսինչով)»:

87. ԶՈՎԻ ՇԱՐԿԵՐԸ.


ա) միաշար սյուն, (զժանկար 1*) և 2),

բ) միատողան (զժանկար 3 և 4),

Ծանոթություն.—վաշտի վարչակազմի դասակի փամփշտակիներին և ասնխարական ջոկերը, բացի հիշյալ շարքերից, կիրառում են դուզաշար սյունը:

ԶՈՎԻ ԿԱՐԳԵՐԸ.

*) 1-ին և բոլոր հաջորդ զժանկարների պայմանական նշանների բացատրությունը տես հավելված II.



ա) ոճաշար (գծանկ 5 և 6) ծածուկ մա-
տակցով տեղաշարժելու.

բ) մարտական (գծանկար 7) բաց տեղանքով
տեղաշարժվելու համար, հակառակորդի դորժոն
հրացանա-գնդացրային կրակի տակ, կրակի վարի-
լու համար տեղափոխման և դրոհի ժամանակ:

Ջոկի հիմնական յերթական շարքը հավիթա-
նում և միաշար սյունը: Առանձին շարժման դեպ-
քում, Ջոկի հրամատարի հայեցողությամբ, յեր-
թմն կարող և կիրառվել Ջոկի զուգաշար սյունը:

88. ՅԵՐԹՈՒՄ ՁԵՌԳԻ ԳՆԴԱՅԻՐՆԵՐԸ և
նրանց փամփուշտների մարտական համալիրը
(դահեռաբաններում կամ տուփերում) փոխա-
դրում են վաչտի յերկանկով, ձեռքի հատուկ
սայլակներով, դահուկային հաստարանների վրա
կամ Ջոկի մարտիկները կրում են իրենց վրա:

Յերթում գնդացիքը ձեռքով տանելու դեպ-
քում, գնդացիքը տանում են հերթով նշանատուն
և Ջոկի մյուս մարտիկները, ընդ վերում վերջին-
ները գնդաչրի փոխարեն, տալիս են նշանատու-
յին, նրանց հատկացրած հրացանը և գնդացրի
մարտամթերքների համալիրները, շարքում բո-
նեղով նշանատուի տեղը: Յերթական և մարտական
դահապանության մեջ, հետախուզության ժամա-
նակ, նույնպես և հարձակման մարտական խը-
զիք դնելիս, ձեռքի գնդացիքներն ազատում են
չափիկներից և տանում են ձեռքով կամ տեղա-
փոխում են հատուկ սայլակների վրա:

89. ԴԱՍԱԿԻ ՄԱՍՆԱՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ Զոկը
չարտնակում և շարժումը միաշար սյունով կամ

անցնում է կարգերի (ոճաշար), մարտակարգի: Դասակի մասնատումից հետո շարքից կարգի անցնելու մոմենտը, ինչպես նաև տեղաշարժման, ծածուկ դրուժյամբ կանգ առնելու, դիրքում տեղավորվելու և դրոճի շարժման համար կարգի ընտրությունը վորոշում է ջոկի հրամատարը: Նա չպետք է սպասի դրա համար դատակի հրամատարի հատուկ կարգադրություններին:

90. ՁՈԿԻ ՀՐԱՄԱՏԱՐԸ պարտավոր է.

- 1) ամբողջ ջոկով տեղաշարժման ժամանակ և կանգառումների ժամանակ, յերբ հարկավոր է ջոկը մեկ կարգից մյուսը փոխադրել անհրաժեշտ դեպքերում փոխել մարտիկների մեջև միջին հեռակայությունները (կամ միջանցները).
- 2) կրակ սկսելուց առաջ ճիշտ ցույց տալ յուրաքանչյուր մարտիկին (նշանառուին) ջոկի դեղակահոծի սեկտորը (հատածը), դեպի առաջ դուրս բերված աջ և ձախ հարևաններին հարվածելուց խուսափելու համար:
- 3) խորքից կրակը վարելու հարմարության համար պահպանել իր և հարևան ջոկերի միջև միջանցները, վոր ցույց է տվել դատակի հրամատարը:

ՀՐԱՁԳԱՅԻՆ ՁՈԿԻ ՀՐԱՄԱՏԱՐԸ.

- 4) յերբ հարկավոր է դուրս բերել ջոկի կազմից լավագույն հրաձիգներին և նոնաձիգներին, ցույց տալով նրանց ինդիքը, դերը և դեպի դիրքը դնալու ճանապարհը.
- 5) կանգառումների համար ընտրել ծածուկ

տեղեր, վորոնք ապահովեն ջոկին անոդի կուրուստներից.

6) դիրքում տեղավորման ժամանակ հետևել առանձին մարտիկների տեղանքում ճիշտ սեղավորմանը.

7) ջոկի մարտիկների խմբակներով կամ առանձին տեղաշարժումը պաշտպանել իր ջոկի կրակով:

ՁԵՌՔԻ ԳՆԴԱՅՐԻ ՁՈԿԻ ՀՐԱՄԱՏԱՐԸ.

8) կանգ առումների ժամանակ նշել դիրքը, և այնտեղ դիտող դնել.

9) դիրքում տեղավորման ժամանակ նշանառուին ցույց տալ նպատակները, նշել հետևյալ դիրքերը և հետևել մարտիկների տեղանքում ճիշտ տեղավորմանը, յեթև կարիք կա նրանց ոգտագործել վորպես հրաձիգներ:

2. ՁՈԿԻ ՇԱՐՔԵՐԸ

91. ՁՈԿԸ ՄԻԱՇԱՐ ՍՅՈՒՆՈՎ ՇԱՐՔԵՐԸ: ՀՄԱՐ, ջոկի հրամատարը հրաման է տալիս «Ձոկ— ՇԱՐՎԻՐ (ՎԱՁՈՎ):»

Մարտիկներն արագ քայլով (վազով), բայց առանց շփոթության և աղմուկի կանգնում են իրենց հրամատարի յետևում, ինչպես ցույց է արված 1 և 2 դժանկարներում: Ձենքի դրուժյունը—վորքի մոտ: Մարտիկների միջև հեռակայությունը—մեկնած ձենքի յերկարությամբ է Ամեն մի մարտիկ պետք է այնպես կանգնի, վոր առջևում կանգնածի դիտի յետևից չտեսնի մյուս:

ների գլուխները: Յուրաքանչյուր մարտիկ կանգնում է «զգաստ» դրուժյամբ:

92. **ՁՈԿԸ ՄԻՍՏՈՂԱՆ ՇԱՐԵԼՈՒ ՀԱՄԲՐ.**
«Ձսկ միատողան— ՇԱՐՎԻՐ (ՎԱԶՈՎ):»:

Ձոկը շարվում է, ինչպես ցույց է տրված 3 և 4 պատկերներում, արագ հավասարվելով ըստ նոնանիցի (նշանառուի): Վերջինս կանգնում է ջոկի հրամատարի յետևում մեկ քայլի վրա: Ձենքի դրուժյունը—վտաքին: Միջանցը մարտիկների միջև—ափի լայնքի չափով. վտաքերի թաթերի ծայրերը—մի ուղիղ գծի վրա. մարտիկները կանգնում են «զգաստ» դրուժյամբ:

93. **ՄԻՍՇԱՐ ՍՅՈՒՆԻՑ ՄԻՏՈՂԱՆ և ՎԵՐՉԻ-**
ՆԻՅ միաշար սյուն վերակողմից կատարվում է քառորդ շրջան դարձումով. «Աջ—ԴԱՐՁ (Ձախ ԴԱՐՁ հրամանով):»

94. **ՁՈԿԻ ՀԱՎԱՍՍԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ,** ջոկի հըրամատարը հրաման է տալիս. **Ձոկ—ՀԱՎԱՍԱՐ,** «ՁԳՍԱՍ»:

Միաշար սյունում գտնվելիս, առաջին հրամանով—վերցնել սահմանված հեռակայությունը և կանգնել ծոճրակի դիմաց:

Միտողան շարքում գտնվելիս առաջին հրամանով մարտիկները գլուխները դարձնում են դեպի աջ և հավասարվում են աջպես, վրա ամեն մեկը տեսնի չորրորդ մարդու կուրծքը, իրեն հաշվելով առաջինը: Յեթե ղենքը վտաքին է, աջ դեպքում միաժամանակ ղենքի փողաքերանը պետք է մտնեցնել աջ ուսին: Աջաթևյանը կանգնում է «զգաստ»:

Յերկրորդ հրամանով—գլուխը պահել ուղիղ, ղենքի փողաքերանը հեռացնել ուսից:

95. **ՊԵՏԻՆ ԴԻՄԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ** (հոդ. 86)—հրաման տալ. 1) «ՁԳՍԱՍ», 2) **ՀԱՎԱՍԱՐՈՒՄԸ ԴԵՊԻ ԱՋ,** (ՁԱՆ, ԴԵՊԻ ԿԵՆՏՐՈՆԸ):

Ձոկի մարտիկները կարճ դարձնում են պըրուխները նշանակված կողմը և նայում են ուղիղ պետին, նրա յետևից դարձնելով գլուխները:

Յերբ յեկամ պետն անցնում է ջոկի ճակատով կամ յուրաքանչյուր հաջորդող հրամանով պըրուխը պետք է ուղիղ պահել:

96. **ՁՈԿԸ ՊԱՌԿԱՏՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ,** միաշար սյունում կամ միտողան շարքում գտնվելիս հրաման տալ. «Ձոկ—ՊԱՌԿԻՐ»:

Վերկացնելու համար. «Ձսկ—ՎԵՐ ԿԱՑ»: Կատարվում է հոդ. 15-ում բացատրված կանոնների համաձայն:

Ձենքի դրուժյունը փոխելու համար հրաման տալ. «Ձսկ—ՈՒՄՆԻՎԱՐ (ՄԵԶՔԻՐ, ՉԵՌՔԻՐ, ՎՈՏՔԻՐ):»:

97. **ՁՈԿԸ ՇԱՐԺԵԼՈՒ ՀԱՄԱՐ.**

«Ձոկ ինձ հետևիլիբ քայլով (վազով) ՄԱՐՇ» կամ, յեթե հրամատարն ինքն անձամբ չի առաջորդում իր ջոկին. «ՌՎՊՈՒՔՅՈՒՆՆ ԿՅՍԻՆԷ ՄԵՊԸ... (հրամանի հեռ միաժամանակ ձևաքով ցույց է տալիս նշանակված ուղղությունը),... «Ձոկ, քայլով (վազով)—ՄԱՐՇ»:

Բոլորը սկսելով շարժումը միաժամանակ նախ վտտից, շարժվում են հրամատարի յետևից կամ ուղղապահի յետևից (ըստ ուղղապահի—մի.

տողանում), պահպանելով ընդհանուր քայլվածքը, ճիշտ պահելով տվյալ ուղղութիւնը, և հասարակումը ծոծրակի դիմաց կամ ճակատի յերկայնութեամբ (դեպի աջ):

Ծանոթութիւն.—Միաշար սյունում ուղղապահը բոլոր դեպքերում—առաջավոր մարտիկն է. միտողանում—աջաթևյան մարտիկը: Զոկը կանգնեցնելու համար. «Զոկ—ԿԱՆԿՄԱՆ»:

Բոլորն անելով ևս մի քայլ (վազով շարժման դեպքում—յերեք քայլ), միաժամանակ կանգ են առնում:

98. ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (յեթե ջոկի հրամատարն անձամբ չի առաջնորդում ջոկին):

Բայելիս. «Զոկ, դեպի աջ (դեպի ձախ)—քայլով ՄԱՐՇ»:

«ՄԱՐՇ» հրամանով ուղղապահը, իսկ նրա յետևից մնացածները (հետզհետե նրա տեղին մտանալուն պես) նրա համեմատ փոխում են ուղղութիւնը:

Յերբ շրջում են, վորքան հարկավոր է, հրաման տալ. «ԱՌԱՋ» և, յեթե հարկավոր է, ավելացնել—«Ուղղութիւնն այսինչ տեղը»:

Ուղղապահը գնում է ուղիղ ցույց տված ուղղութեամբ, մնացածները շարժվում են նրա յետևից:

Զոկն արձակելու համար «Զոկ—ՅՐՎԻՐ»:

Ծանոթութիւն.—Յերթում, վորք դարձի համար կանգառումների ժամանակ, «ՅՐՎԻՐ» հրամանը չի տրվում:

Զոկի դարձումները տեղում և քայլիս կատարվում են հող. 19 և 23-ում բացատրված հրամանների և կանոնների համաձայն:

99. ԶԵՆՔԻՑ ԲՈՒՐԳ ԿԱԶՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ, հրաման տալ. «Զոկ—գեմն ի ԲՈՒՐԳ»:

Այս հրամանով նոնաձիգը (առաջավորը, աջաթևյանը), իսկ ձեռքի գնդացրի ջոկում—նշահարուրի ողնականը յետ և դառնում տեղում (միտողանում— դեպի ձախ, իսկ մնացած մարտիկները միաժամանակ դառնում են դեպի աջ). մնացած մարտիկները (միտողանում աջ դարձումից հետո) արագ մոտենում են նոնաձիգին և հրացաններից բուրգ են կազմում: Նոնաձիգը հեղում է, վոր սվինները մոտեցնելիս և հրացանի կոթերը միմիանցից հեռացնելիս հատիկներն իրար չկպչեն:

Ծանոթութիւն.—Զեռքի գնդացրի ջոկում ձեռքի գնդացիրը դեմ են անում բուրգին կամ կանգնեցնում են նրան մոտիկ հենարանի վրա. ժաղալեններով (պահեստարաններով) լի տուփերը, յեթե այդպիսիները տարել են մարդկանց վրա, զետեղում են բուրգերի տակին:

Յեթե ջոկում 6-ից ավելի մարտիկ կա. այսինչից սկսած (ազգանունը)—յիրկրարդ բուրգ, «Զոկ— ԶԵՆՆ ի ԲՈՒՐԳ»:

Մարտիկների բուրգ կազմելուց հետո, ջոկի հրամատարը հրաման է տալիս ջոկին շարվելու (հող. 9). ջոկը բուրգի յետևում կամ կողքին շահ

րելուց հետո, ստուգում ե գեներից բուրդ կազմելու ճշտութիւնը:

Դասնք — 1. Յուրաքանչյուր մարտիկ շարքում պարտաւոր ե իր մոտ ունենալ պարանկ ող (4-5 սմտ. տրամադծով) գեներից բուրդ կազմելու համար:

Ծանայք — 2. Բուրդերի ճիշտ կազմելու պատասխանատւութիւնն ընկնում ե նոնաձիղի վրա (նշանառուի ողնականի) և հրամանով նշանակված մարտիկի վրա:

Բուրդից հրացանները վերցնելու համար — «Ձսկ ի ՁՅ՛ն»:

Մարտիկներն արագ վերցնում են գեներ և շարվում են նոնաձիղի համեմատ (ձեռքի վնդացրի շոկում-նշանառուի համեմատ), գեները — վտակից դրութիւնով. շարքը նույնն ե, ինչ վոր գեներից բուրդ կազմելուց առաջ:

100. ՇԱՐՔԵՐԻՑ ՀՐԱՁԳՈՒԹՅՈՒՆԸ կատարվում ե հող. 48-ում ցույց տված հրամանների համեմատ.

ա) մարտական պարազայի պայմաններում — հեծելազորի հանկարծակի դրոհը յերթի ժամանակ յեա մղելու համար, յերբ ջոկը ժամանակ չունի պաշտպանվելու համար տեղական առարկաներից հարմարը բռնելու, ողային նպատակների վրա և ոժանդակ նշանատուիւնյան կեա յեղած դեպքում:

բ) խաղաղ պարազայի պայմաններում — վողջույնի համար (սին փամփուշտներով) և հրաձգա-

յին մարմնամարդուիւնյան (փարտական փամփուշտներով), համապատասխան միանները վարձեցնելու նպատակով. (ձեռքերի, աչքերի, մատների) և հրաձգուիւնյան ձեւերի ախտոմաս ունախտութիւնների համակու համար:

Ծանոթութիւն — Ձեռքի գեղացրի ջոկում շարքից հրաձգութիւնը կարելի յե կատարել միմիայն հրացանով:

101. ՀԵՏԵԼԱՉՈՐԻ ՀԱՆԿԱՐԾԱԿԻ ԳՐՈՀԻ ԴԵՊՅՈՒՄ մենակ գնացող հրաձիգ ջոկի վրա, ջոկն ընդունում ե դրոհը միտողան շարքում, վտըը կազմվում ե միաշար սյունից մարտիկները դեպի ձախ դուրս վաղելու միջոցով, ջոկի հրամատարի կանդնած գծի վրա, կամ տեղում քսուորդ շրջան դարձումով (թևից դրոհ տայու դեպքում):

Յեթե ջոկը յենթարկվում ե հանկարծակի դրոհի գննադան կողմերից, այդ դեպքում մարտիկներն առանց հրամանի սպասելու, խմբուց են ջոկի հրամատարի շուրջը և յեա են մղում դրոհը մենազարկ կրակով և ձեռքի նոնակներով, հրացանը կիս մտտիկից կրակելով, մինչև վերջին վայրկյանը:

102. Հակառակորդի գրահատյատ մեքենայի յերեվայու դեպքում, ջոկի հրամատարը

1) միջոցներ և ձեռք առնում իր պորամասերին նախազգուշացնելու պայմանական նշաններով:

2) միջոցներ և ձեռք առնում գրահատ-մեքենան վողջուշացնելու (կրակ դրահատար գնդակներով

դրահամեքենայի խոցելի տեղերին կամ հաս-
րակ ղեղաղկներով—ճեղքերին և անցքերին)։

3) որտաղործում է ձեռքի տակ յեղած մի-
ջոցները դրահամեքենայի դեպի մեր պորամասերի
չարժման ճանապարհը կտրելու, իսկ յեթև արդ
չհաջողվի,—այն դեպքում վերադարձի ճանա-
պարհը կտրելու համար։

103. Հակառակորդի ինքնաթիռների յերևա-
յալ դեպքում, «ԻՆՔՆԱԹՐՈՒՄ» հրամանով (նշանով,
աղբանշանով), ջոկը, հրամատարի «ԻՆՁ ԶՆՏՆ-
ՎԻՐ» հրամանի համաձայն, յեթև մտտիկում
ինքնաթիռի դիտողությունից ծածկարաններ
չկան, ճանապարհից դուրս է վազում և բացա-
զատվում է հձաչար, շարունակելով շարժումը
կամ «ՊԱՌԿԻՐ» հրամանով—անկարգ, բայց ա-
ռանց կուտակվելու, պառկում են յերևաները դե-
պի ցած, ծածկելով զենքի և հանդերձանքի փայ-
լուն մասերը. հակադազերը «պատրաստ» դրու-
թյամբ։

Յեթև ինքնաթիռը ցածրանում է մինչև 400-
500 մետր, այդ դեպքում հրամատարի հրամա-
նով, հրաձիգները կրակ են բաց անում։

104. Ողում ԹՆ ներկայության հայտարե-
ման դեպքում, ջոկը հագնում է հակադազերը,
քիմիական տաղնասլի աղբանշանի կամ «ԳՎՁԵՐ»
հրամանի համաձայն։

3. ՁՈԿԻ ԿԱՐԳԵՐԸ

105. ՁՈԿԻ ԿԱՐԳԸ ԳՆՏՔ Ե՝

ա) ապահովի ձայնով զեկայվարելու հուտա-
լիությունը, վորի համար ջոկը ճակատի յերկա-

րությամբ կամ խորությամբ, 30--40 մետրից
ավելի չպետք է բռնի։

բ) ապահովել, բոլոր մարտիկների հա-
մար մեկը մյուսին ոգնելու հնարավորությունը,
չխանգարելով կրակ վարելուն ու շարժմանը։

Կարգերում մարտիկները դասավորությունը
վարչվում է ջոկի հրամատարի ցուցումներով և
այն ինքնագործունեյությամբ, վոր հայտարե-
րում են մարտիկները, ձեռնելով ամենալավ ձեվով
որտաղործել իրենց զենքի ուժն և տեղանքը։

Յեթև ջոկի հրամատարի կողմից միջանցները
(հուսկայությունները) ցույց չեն արված, մար-
տիկներն այդպիսիները պահում են 3-4 քայլ
չափ։

Ամեն մի հրամանի կամ պատվերի սկզբնա-
կալ բառերի ժամանակ, վոր վերաբերում է ամ-
բողջ ջոկին կամ առլիչի ձայնից մարտիկները
դրվաները դարձնում են դեպի ջոկի հրամատա-
րը, դադարեցնելով կրակելը, յեթև կրակ վարե-
լիս են յեղել։

106. ՄԻԱՇԱՐ ԱՅՈՒՆԻՑ ԿԱՐԳԵՐԻՆ (ՈՉԱ-
ՇԱՐ ԿԱՄ ՄԱՐՏԱԿԱՆ) ԱՆՏՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՁՈ-
ԿԻ հրամատարը հրաման է տալիս։

ա) «Ուղղությունը այսինչ տեղը» կամ «դե-
պի այս առաքիան», «Շարժվել այսինչ առվով»
(միտամանակ ձեռքով ցույց է տալիս կողմնո-
րոչ կետի դրությունը և շարժման ուղին)—յեթև
անըդհատ շարժում է նախատեսվում կամ «ՀՂ-
րաձուր-յան համար գրավել այսինչ բնագիծը»։

բ) «Հեռակայությունն (սիջանցը) այստեղ

Քայլ» կամ «Բանկ այսինչ տեղից մինչև այնինչ կետը»:


2) «Ձուկ—ՈՉԱՇԱՐ» (ոճաշար անցնելու դեպքում) կամ «Ձուկ—ԲԱՅՎԻՐ», (մարտական կարգի անցնելու դեպքում):

Կատարողական հրամանով.

ա) Ոճաշարի անցնելու համար.

Նոնաձիգը (նշանառուն) սկսում է շարժվել վազով, ուղիղ ցույց տված առարկայի ուղղու-

թյամբ, մնացածները հանրապարար նոնաձիգի յետից անցնում են վազի, հրամանով ցույց տված հեռակառուցվածները հեռագճեան ավարտուց հետո (դժանկ 5-6). Յեթ ջոկի բոլոր մարտիկները ձրգվում են ոճաշար, ջոկի հրամատարը կամ շարժումն սնցկայում է քայլի կամ կանգնեցնում է ջոկը:



Գծ. 8 Նոնաձիգ ջոկի միջոցը սյուրից մարտական կարգի անցնելու:

բ) Մարտական կարգի անցնելու համար. նոնաձիգը (նշանառուն) շարժումն սկսում է քայլով, ուղիղ ցույց տված առարկայի ուղղությամբ. մնացած մարտիկները շարժվում են վազով նոնաձիգի շարժման ուղղությունից կես դարձ դեպի աջ կամ ձախ (դժանկ. 5). մատրիկները հեռագճեան իրենց տեղերը դուրս գալուց հետո, ինքնուրույն կերպով անցնում են քայլով շրջանում:

Ծանոթություն.—Յեթե, ժամանակ չլինելու պատճառով, մարտի համար կարգի անցնելուց առաջ ցույց չի տրվել ջոկի դարձուցվածների նպատակը, այն դեպքում այդ պետք է անել առաջին հարմար դեպքում:

107. ՄԻՆՇԱՐ ՍՅՌԻՆԻՑ ԿԱՄ ԱՉԱՇԱՐԻՑ ՄԱՐՏԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԱՆՏՆԵԼՈՒ ԶՄԱՐ, առանց առաջ շարժելու, ջոկի հրամատարը հրաման է տալիս.

- ա) »Ուղղապահ ԿԱՆԻ Ա՛Ր»,
- բ) »Ուղղությունն այսինչ տեղը, ՏԵՂՈՒՄ»:
- գ) »Միջանցը այսեան Բայլ» կամ «Տեղավորվել այսինչ տեղից մինչև այսինչ կետը»:
- դ) «Ձուկ—ԲԱՅՎԻՐ» (դժանկ. 8 և 9):

Մարտական կարգից ոճաշարի անցնելը կատարվում է, ինչպես ցույց է տրված 10-րդ դժանկարում:

Կարգից շարժի համարը կատարվում է «Ձուկ—ՇԱՐՎԻՐ» հրամանով:


108. ԱՄԲՈՂԶ ՋՈԿԸ ՄԻՍՃԱՄԱՆԱԿ ՇԱՐՃԵԼՈՒ ԶՄԱՐ, ջոկի հրամատարը հրաման է տալիս. «ՀՐԱՀԱՆ»: «Ձուկ—այսինչ տեղն ԻՆՁ ՆՈՏԵՎԻՐ ՎԱՋՈՎ»:

Ձուկը կանգնեցնելու համար. «Ձուկ—ԿԱՆԻ Ա՛Ր»:

Մարտիկները կանգ են առնում և բռնում են ծածկված գրուսթյուն կամ ընդունում են հրաձր-

գուլթյան համար դրուլթյուն, հարմարվելով տեղանքին:

ՋՈԿԻ ՄՍՐՏՍԿԱՆ ԿԱՐԳԻ ՇԱՐՖՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԸՆԿԻ հրա-




Գծանկ. 9. Հրածիզ ջոկի սճաշարից մարտական կարգի անցնելը:

մատարը հրաման և տալիս. «Ուղղուլթյունն աշխնչ տեղը» (մխաժամանակ ձեռքով ցույց և տալիս նոր ուղղուլթյունը):

109. ՀՐԱԶԻԳ ՋՈԿԻ ԽՄԲԱԿՆԵՐՈՎ ՏԵՂԱՇԱՐՖՈՒՄՆԵՐԻ (ՎԱԶԵՎԱԶՔԻ, ՍՈՂԱԼՈՒ) ԺԱՄԱՆԱԿ, առաջինը գնում և այն խմբակը, մոր ջոկի հրամատարի գլխավորուլթյամբ և, վերջին

խմբակի հետ տեղաշարժում և ջոկի հրամատարի տեղափոխում:



Գծանկ. 10. Հրածիզ ջոկի մարտական կարգից սճաշարի անցնելը:

Մեկ-մեկ տեղաշարժման դեպքում, առաջինը տեղաշարժում և ջոկի հրամատարը, իսկ վերջինը ջոկի հրամատարի ուղնականը:

Ջոկի հրամատարի հրամանը ջոկը խմբակ-

ներով տեղաշարժելու համար, մտաւորապես հետեւյալն է.

ա) «Հրաձգութեան համար քոնիլ Բփիքր 40 հայլ դեպի աջ»:

բ) «Վազելագք խմբակներով—առաջին խմբակն այսինչ անձինք, յերկրորդն այսինչ անձինք»:

գ) «Մեզ ոգևում է ձեռքի յերկրորդ գնդացիք. տեղում մնացածներին և վազելագքը կուտարածներին կրակ բանալ».
Կամ «տեղում մնացածներին կրակ բանալ, վազելագքը կուտարածներին քաֆնվել այսինչ տեղը»:

Կատարումն սկսում է հրամատարի իրեն տեղաշարժումով:

Նոր բնագծին հասնելուց հետո, ջոկի հրամատարը մնացած մարտիկներին նշան է տալիս տեղաշարժելու համար:

Մեկ-մեկ տեղաշարժելու դեպքում—տեղում մնացած մարտիկները ցույց տալով հերթի կնդրով, ինքնուրույն կեցողով, իսկ հարկաւոր դեպքերում—ջոկի հրամատարի տեղակալի հրամանով՝ «Այսինչ ՀՐԱՂՆ, ԱՌԱՂ»— սկսում են տեղաշարժել, նշելով իրենց շարժման ուղին:

Խմբական տեղաշարժման դեպքում յերկրորդ և հաջորդ խմբակներն սկսում են շարժումը ջոկի հրամատարի տեղակալի, «Այսինչ խմբակ ՀՐԱՂՆ, ԱՌԱՂ» հրամանով:


110. Ձեռքի դնդացի ջոկի վազելագքի (առանջ ուղղությամբ) ժամանակ, առաջինը տեղաշարժվում են ջոկի հրամատարը և նշանաւորի ողնա-

կանը, վերջինս տեղ է պատրաստում դնդացի համար և դնդացիքը մտա բերելուց հետո կրակ է բաց անում:

111. ՁՈՎԻ ԴՍՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ դիրքում կրակ վարելու համար վորոշվում է ջոկի հրամատարի և մարտիկների ինքնադարձունեութեամբ, իսկ ձեռքի դնդացի ջոկում հաս դընդացիքը հրասպառով մնելու հարմարութեամբ (գծանկ. 11):

Կրակը դեկավարելու ժամանակ ջոկի հրամատարը դեկավարվում է հող. 48 և 74 - ցույց մուշքների համեմատ:

112. ՁՈՎԸ ԳՐՈՇԻ ԾԱՐԹԵԼՈՒ ՉՍՍԱՐ, այն դեպքերում յերբ յերման դրութեանը հակառա-



Գծանկ. 11. Ձեռքի դնդացի ջոկի դիրքում:

կորդից 100 մետրից ավելի յե, ջոկի հրամատարը առանց կրակը դադարեցնելու, հրաման է տալիս, «Պատրաստվել գրոհի», մարտիկներն առանց կրակը դադարեցնելու, պետք է պատրաստ լինեն ավիանավարտի նետվելու:

Ջոկի հրամատարն առանջ է վազում և վազելիս հրաման է տալիս. «Գրոհի—ԱՌԱՂ ԻՆՁ ՀԵՏԵՎԻՐ»:

Բոլոր մարտիկները միաժամանակ վեր են թռչում և, բարձր ձայնով կրկնելով «ԱՌԱՅ», ջոկի հրամատարի հետեւից սուղ են շարժվում արագացրած քայլերով:

Յեթե արգելում չի յեղել, այդ դեպքում մարտիկները, քայլելիս զնդակահար են անում հակառակորդին հրացաններով, վորի համար ընկերներից մի քանի քայլ առաջ են վազում, կարճատև (1—2 վարկյան) կանգ են առնում վերածիդ հրաձգութեան համար, քայլելիս լցնելով հրացանները:

Հակառակորդին 75—100 մետր մոտենալու դեպքում, ջոկի հրամատարը շեշտակի նետվում է առաջ հրաման տալով «ՍՎԻՆԱՄԱՐՏԻ—ՀՈՒՌՈՒՄ»:

Մարտիկները «ՀՈՒՌՈՒՄ» գոռալով հրամատարի հետեւից նետվում են ավինամարտի: Առջեվի մարտիկները վազելիս հակառակորդի վրա նետում են ձեռքի նռնակներ:

«Հուռոտ» գոռալը արգելելու և դիշերային գրոհի ժամանակ հրաման է տրվում. «ՍՎԻՆԱՄԱՐՏԻ», վորի համաձայն մարտիկները լուս նետվում են ձեռնամարտի:

Յեթե գրոհի համար շարժումը կատարվում է 100 մետրից ավելի մոտ հեռավորութեան վրա, այդ դեպքում «Պատրաստվել գրոհի» պատվերից հետո անմիջապես հրաման է տրվում «ՍՎԻՆԱՄԱՐՏԻ ՀՈՒՌՈՒՄ»:

Հ Ր Ա Ձ Ի Գ Գ Ա Ս Ա Կ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

113. ԴԱՍԱԿԸ ՎԱՇՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՇԱՐՔՈՒՄ ԳՏՆՎԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ Հրամաններ տալու համար դասակի հրամատարը.

ա) յերկտողան շարքից— դուրս է դալիս յերկու քայլ առաջ և յերկրորդ քայլի հետ միաժամանակ դառնում է դեպի ձախ.

բ) ղորասյունից շարժման ժամանակ— դուրսը դարձնում է յետ. տեղում— դառնում է յետ ընդվորում յեթե հրամանը նախատեսում է շարժման սկիզբը, այդ դեպքում նախապատրաստական հրամանը տալուց հետո ընդունում է նախկին դրությունը, իսկ կատարողականի համար միայն դուրսը դարձնում է դեպի դասակը:

114. ԴԱՍԱԿԸ ԱՌԱՆՁԻՆ ԳՏՆՎԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ, ինչպես և վաշտը կարգերում դանդելիս, դասակի հրամատարի տեղը վորոշվում է ստորադրյալ ջոկերի ղեկավարելու և վաշտի հրամատարի և հարեվան դասակների հետ ամենալավ կապ պահելու հարմարութեամբ:

Դասակի հրամատարի ոգնականը կանդնում է ղորասյունի յետեւում, իսկ յերկտողան շարքում— ձախ թեւում: Մասնատված և մարտական կարգում, յեթե դասակի հրամատարն առանձին ցուցումներ չի տվել, տեղավորվում է հրաձիգ ջոկերի մեծամասնութեան տեղավորման շարժմանը:

Դիտողը և կապավորները շարքում յեղած ժամանակ տեղավորվում են շոկերում: Կարգերի անցնելիս, ղիտողն և կապավորները զնում են դասակի հրամատարի յետեվից կամ նրա ցուցումով:

115. **ՋՈՒԿԵՐԻ ՇՍՐԳԵՐԻ ՅԵՎ ԿԱՐԳԵՐԻ**
ՋՈՒԳԱԿՑՈՒԹՅԱՄԻ կազմվում են դասակի շարքերն ու կարգերը (տես ստորև աղյուսակը)


Գ-սակի շարքերը	Ջոկերի շարքերը	Ջոկերի դրուժյունը	Գծանկարներ
Միաշար սյուն	Միաշար սյուն	Գլխում 1-ին շոկը և ապա ըստ կարգի 2-րդը, 3-րդը, 4-րդը, 5-րդն իրար ծածրակի դիմաց:	Գծանկ. 12
Չուգաշար սյուն	Միաշար սյուն	1-ին և 3-րդ շոկերը կողք կողքի, 4-րդ շոկը 1-ինի յետևում, 4-րդ և 5-րդ շոկերը կողք կողքի (4-րդը 2-րդի ծածրակի դիմաց և 5-րդը 3-րդ շոկի ծածրակի դիմաց):	Գծանկ. 13
Բառաշար սյուն	Միաշար սյուն	1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ շոկերը համարների կարգով աջից ձախ կողք կողքի, 2-րդ շոկը 1-ինի ծածրակի դիմաց:	Գծանկ. 14
Յերկուս դաս շարք	Միաշար շարք	Առաջին պողանք կազմում են 3-րդ և 5-րդ շոկերը (3-րդ շոկն աջ յետևում), յերկրորդ տողալը կազմում են 1-ին, 2-րդ և 4-րդ շոկերը (աջից դեպի ձախ համարների կարգով): Մանր ուրշում. — Տողաները կազմաարկու ներածիշառիջան դեպքում, թույլատրվում է շոկի տեղափոխություն մի տողանից մյուսը դասակի սահմաններում:	Գծանկ. 15

Հրաձիգ վաշտի վարչական դասակը շարքավում է ինչպես ցույց է տրված 16, 17, 19, 19 դժանկարներում:

Դասակի կարգերը.


ա) մասնատած կարգ (դժանկարներ 20, 21).

բ) մարտական կարգ (տես «Հետեվակի մարտական կանոնագիրը» մ. II):




116. **ՄԱՐՏՈՒՄ**, վաշտի մասնատման ժամանակ, հրաձիգ շոկը, յեթե տեղանքը ծածկում է կրակից, շարունակում է շարժումը դուրաշար կամ միաշար սյունով, հակառակ դեպքում — անցնում է մասնատված կամ մարտական կարգի:

Մարտական կարգի անցնելու ժամանակից առաջ սովորաբար վաչտի հրամատարը դասակին վորոչ մարտական խնդիր և տալիս:



զճՆ 17 Երայց վաչտի կառավարման թանաքի վազաշար
 զճՆ 18 Երայցային վաչտի կառավարման դասակի յեռաշար



զճՆ 19 Երայց վաչտի կառավարման դասակի յերկտողան

զճՆ 16 Երայց վաչտի կառավարման թանաքի վաչար պլանով


117. ՎԱՇՏԻ ՍՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՄ ԳՍՈՒՑ ՀԵՏՈ, ԴԱՄԱԿԻ ՀՐԱՄԱՏԱՐԸ ՊԵՏՔ Ե՛

ա) Մերձեցման շրջանում շարժումներ կատարելիս նույնպես և հարձակման սկզբին խուսա-

փել դասակը մարտական կարգի շուտափուլից բացառաբերելուց, ծածկված մատուցյանը անցնելով ընդհանուր շարժում, իսկ բաց տեղերը մասնատված կարգով, ընդհանուր սյուն կազմել հիշյալ տեղերն անցնելուց հետո:

բ) դասակի տեղաշարժումների և կանգառումների ժամանակ, յերբ հարկավոր և, այնպես փոխել ջոկերի միջև հեռակայություններն և միջանցները, վոր վաչտի և գումարտակի կրակային միջոցներն ամենից լրիվ ուղտադործեն իրենց կրակը:

գ) դասակը թաքուն կանգառներու ժամանակ, այնպիսի տեղեր ընտրել, վորոնք դասակն ապահովեն ավելորդ կորուստներից, ղխողություն դնելով:



Գճանկ. 20. Երկրորդ դասակի մասնատված կարգ:

Գճանկ. 21. Հրամայ դասակի մասնատված կարգ:

դ) այն բոլոր դեպքերում, յերբ դասակը գտնվում և առաջին շարանում, բայց թեպում և

ինքնուրույն գործողութիւններ կատարելիս— դէ-
տողութեան կազմակերպիչ (հարկավոր դեպքում
2-3 մարդուց բաղկացած շեռքեր ուղարկելով) .

դ) յերբ հարկավոր է, ջսկերի կազմից զա-
տել նունաձիգներ և գերազանց հրաձիգներ, մար-
տական խնդիրներ նրանց տալով :

2. ԴԱՍԱԿԻ ՇԱՐՔԵՐԸ

118. ԴԱՍԱԿԸ ՔԱՌԱՇԱՐ, ՁՈՒԳԱՇԱՐ ԿԱՄ
ՄԻՈՇԱՐ ՍՅՈՒՆՈՎ ՇԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ .

«Դասակ— քառաշար (գուգաշար, միաշար)
ՇԱՐՎԻՐ (ՎԱՁՈՎ)» :

Հրաման տալուց հետո, դասակի հրամա-
տարը կանգնում է ցանկացած ուղղութիւնք :

Ձոկերի հրամատարներն ու մարտիկներն
բռնում են իրենց տեղերը (դժանկ. 12, 13, 14),
ընդ վորում առաջին ջոկի հրամատարը, վորի
համեմատ կատարվում է շարվածքը, կանգնում է
դասակի հրամատարի յետեվում յերեք քայլի
վրա :

119. ԴԱՍԱԿԸ ՅՅՐԿՏՈՂԱՆ ՇԱՐԵԼՈՒ ՀԱ-
ՄԱՐ .

«Դասակի յերկտողան— ՇԱՐՎԻՐ (ՎԱՁՈՎ)» :

Հրաման տալուց հետո, դասակի հրամա-
տարը կանգնում է յերեսը ցանկացած ուղղու-
թիւնք և յերկու ձեռքերը մեկնում ի դեպի յեր-
կու կողմը, նշանակելով դասակի ճակատի ուղ-
ղութիւնը, վորից հետո յերեսը դարձնում է դե-
պի գասակը :

Ձոկի հրամատարներն և մարտիկները բռնում
են իրենց տեղերը (դժանկ. 15), շարվելով յեր-
րորդ ջոկի հրամատարի համեմատ, վորը կանգ-
նում է դասակի հրամատարի յետեվում յերեք
քայլի վրա :

Դասակը հարկատարելու համար .

«Դասակ— ՀԱՎԱՍՏ» ,

«ՁԳՍՍ» :

120. ՊԵՏԻՆ ԴԻՄԱՎՈՐԵԼՈՒ, դասակը պատ-
կացնելու, արձակելու, զինքի-դուրսի յոնը փոխե-
լու, շարժելու, դասակը կանգնեցնելու, շարժման
արագութիւնը փոխելու, ուղղութիւնը փոխելու,
կամ դասակը յետ դարձնելու համար— դասակի
հրամատարը տալիս է նույն հրամանները, ինչ
վոր ջոկի հրամատարը, նախադրուշացնելով նը-
րանց, «Ձոկ» հրամանի փոխարեն, «Դասակ»
հրամանով :

Կատարումը տեղի յի ունենում ժողովարա-
պես հող. հող. 86, 96, 97, 98-ի համեմատ,
հետեվյալ փոփոխութիւններով .

ա) «Պատկի՛ր» հրամանով— ջոկի յերկտողան
չարքում յեղած ժամանակ, առաջին տողանում
դանվորները, մի քայլ են անում դեպի առաջ, վո-
րից հետո սրանկում են. զուգաշար սյունում յեր-
րորդ և հինգերորդ ջոկերը մի քայլ անում են
դեպի ձախ. քառաշար սյունում— զնդացրային
ջոկերը մի քայլ անում են դեպի աջ, չորրորդը
մի քայլ ձախ և հինգերորդ ջոկը— յերկու քայլ
դեպի ձախ :

123. ԴԱՍՍԿԸ ՄԻԱԾԱՐ ՍՅՈՒՆԻՑ ԶՈՒԳԱ-
ՇԱՐ ՍՅԱՆ ՇԱՐԱՓՈՒՅԵԼՈՒ ԶԱՄԱՐ.

Քայլելիս և տեղում.

«Զուգաշար -- ՇԱՐՎԻՐ (վազով)»:

Առաջին և յերկրորդ ջոկերը մնում են տեղում (դանդաղեցնում շարժումը), յերրորդ ջոկն առաջ է շարժվում առաջինի դժի վրա:

Չորրորդ ջոկը դնում է յերկրորդի ծոծրակի դիմաց, իսկ հինգերորդ ջոկն առաջ է շարժվում չորրորդի դժի վրա (յերրորդի ծոծրակի դիմաց):

Ջոկերն իրենց տեղերը հասնելուց հետո դասակի հրամատարը կամ կանգնեցնում է դասակը կամ շարժում է լրիվ քայլով:

Հակառակը--դուրաշար սյունից միաշար սյան փոխելու համար.

Տեղից

«Միաշար քայլով (վազով) ՄԱՐՇ»

Քայլելիս

«Միաշար--ՇԱՐՎԻՐ (վազով)»:

Առաջին և յերկրորդ ջոկերը շարժվում են ուղիղ, նրանց յեռեկից ձգվում են հաջորդաբար, հետո հետևան տեղ ադատվելուն նիս, յերրորդ, չորրորդ և հինգերորդ ջոկերը:

124. ԴԱՍՍԿԸ ՔԱՌԱՇԱՐ ՍՅՈՒՆԻՑ ԶՈՒ-
ԳԱՇԱՐ ՍՅԱՆ ՓՈՒՅԵԼՈՒ ԶԱՄԱՐ.

Տեղից

«Զուգաշար--քայլով--ՄԱՐՇ»:

Քայլելիս.

«Զուգաշար--ՇԱՐՎԻՐ--(վազով)»:

Առաջին, յերկրորդ և յերրորդ ջոկերն սկսում են (շարունակում են) շարժումը:

Չորրորդ և հինգերորդ ջոկերը--մնում են տեղում (դնալիս դանդաղեցնում շարժումը) մինչև չորրորդ ջոկի հրամատարի հրամանը--«Ինձ հետևի՛ր քայլով (վազով)--ՄԱՐՇ», փորի համեմատ յերկու ջոկերն էլ սկսում են ձգվել առջևում գնացող ջոկերի յեռեկից:

125. ԴԱՍՍԿԸ ԶՈՒԳԱՇԱՐ ՍՅՈՒՆԻՑ--
ՔԱՌԱՇԱՐ ՍՅԱՆ ՓՈՒՅԵԼՈՒ ԶԱՄԱՐ.

Քայլելիս և տեղում.

«Գառակ, քառաշար--ՇԱՐՎԻՐ (վազով)»:

Առաջին, յերկրորդ և յերրորդ ջոկերը մնում են տեղում (քայլելիս--դանդաղեցնում են շարժումը):

Չորրորդ և հինգերորդ ջոկերը, առաջ շարժվելով դեպի ձախ նախորդների դժի վրա, կանգ են առնում (քայլելիս--դանդաղեցնում են շարժումը):

Գրանից հետո դասակի հրամատարը հրաման է տալիս.

«ԼԱՅՆ ՔԱՅԼ» կամ «քառակ-ԿԱՆԳ ԱՌ»:

126. ԶՈՒԳԱՇԱՐ ՍՅՈՒՆԻՑ ՅՆՐԻՏՈՂԱՆ ԿԱԶՄԵԼՆ և ընդհակառակը կատարվում է դասակի դեպի ձախ (դեպի աջ) դարձումով միայն նախապես փոխելով (յեթե հարկավոր է) դասակի ուղղությունը:

Քառաշար և միաշար սյունը յերկտողան շարքի փոխելու համար և ընդհակառակը հարկա-

վոր և նախապես դասակը շարափոխել գուգաշար սյունի:

127. **ՁԵՆՔԸ ԲՈՒՐԳ ԿԱԶՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ.**

«Դասուկ—գեմն ի ԲՈՒՐԳ»:

Այդ հրամանով, դասակը յերկտուղան յեղած ժամանակ, ստաջին տողանի ջոկերն անում են մի քայլ առաջ. գուգաշար սյունում յեղած ժամանակ—յերրորդ և հինգերորդ ջոկերն անում են մի քայլ դեպի ձախ. դասակը քառաշար սյունում յեղած ժամանակ—գնդացրային ջոկերն անում են մի քայլ դեպի աջ, չորրորդը—մի քայլ դեպի ձախ և հինգերորդ ջոկը յերկու քայլ դեպի ձախ:

Վերոհիշյալը կատարելուց հետո, ջոկերի հրամատարները հրամաններ են տալիս, իսկ մարտիկները կատարում են հող. 99-ում ցույց տըվածը:

Ջոկերը բուրգ կազմելուց հետո, դասակի հրամատարը հրաման է տալիս դասակին առանց, զենքի շարվելու (հող. 118, 119) աշխտեղ, վորտեղ հարմար է: Դասակի հրամատարի ողնականը ստուգում է զենքը բուրգ կազմելու ճշտութունը:

Ձենքը վերցնելու համար.

«Դասակ—ի Ձեն»:

Մարտիկներն արագ վերցնում են զենքը և շարժվում են ջոկերի հրամատարների համեմատ. շարքը նույնն է ինչ միջև բուրգ կազմելը:

128. **ԴԱՍԱԿԸ ՃԱՆԱԿԱՐԻԿ—ԱՋ (ՁԱՆ)**, դասակասյունն արագ վազում է ճանապարհից դեպի աջ կամ դեպի ձախ և շարունակում է շարժումը:

«Ճանապարհից—ԱՋ ՈՒ ՁԱՆ» հրամանով, քառաշար և միաշար սյունից-առաջին, յերկրորդ և յերրորդ ջոկերը ճանապարհից վազում են դեպի աջ, իսկ չորրորդն և հինգերորդը—դեպի ձախ. գուգաշար սյունից-առաջինը, յերկրորդն և չորրորդը—դեպի աջ, իսկ յերրորդն և հինգերորդը—դեպի ձախ: Ջոկերը, ճանապարհից դուրս վազելուց հետո, շարունակում են շարժումը նրա կողմնակներով:

«Ճանապարհով—ՄԱՐՇ» հրամանով վերադառնալով ճանապարհի վրա, վերականգնում է շարժման նախկին կարգը:

129. **ԴԱՍԱԿԻ ՀՐԱՄԱՏԱՐԸ ԿԱՐՈՂ Ե ԴԱՍԱԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍՅՈՒՆԻՑ ՄԻ ՔԱՆԻ ՋՈԿԵՐ ՁԱՏԵԼ**, շարժման և գործողութունների համար իր ողնականի հրամատարության տակ:

Դասակի հրամատարի ողնականն այդ ջոկերը դուրս է բերում դասակի ընդհանուր շարքից, դասակի հրամատարի ցույց տված ուղղությամբ շարժելու համար, հրաման տալով.

ա) «այսինչ ջոկեր, լսի՛ր իմ հրամանը ...»

բ) «մեկ-մեկ (յերկերիկու) ինջ ՀԵՏԵՎԻՐ» կամ «ուշադրությունն այսինչ տեղը փայլով (վազով) — ՄԱՐՇ»:

Հետագայում դասակի հրամատարի ողնականը ղեկավարում է իրեն սղարադրյալ ջոկերին անմիջականորեն դասակի հրամատարի համար ցուցումների համեմատ:

130. ԴԱՍԱԿԻ ՇԱՐՔԵՐԻՑ ՀՐԱՋԳՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐՎՈՒՄ Ե ՆՈՒՅՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ և նույն հրամաններով, վորոնք ցույց են տրված ընկի համար, նկատի առնելով հետևյալը. «յերկտողան» շարքից հրաձգութեան ժամանակ «ԼՅՐՈՒ» հրամանով, — յետևի տողանում կանգնած մարտիկները բացի ձեռքի գնդացիների նշանառուներից, մի քայլ են անում դեպի ձախ—առաջ, առջեվի տողանում կանգնած մարտիկների միջեվ յեղած միջանցների դիմացը կանգնելու համար, մարտիկները միաժամանակ ուղղում են իրենց հրացաններն այդ միջանցը և լցնում են:

Հրաձգութեանը դադարենցելու համար տրված հրամանը կատարելուց հետո, զենքը վերցնում են վորաքին, ընդ վորում բոլորը բռնում են իրենց նախկին տեղերը:

131. ՀԵԾԵԼԱԶՈՐԻ ՀԱՆԿԱՐԾԱԿԻ ԳՐՈՂԻ ԴԵՊՔՈՒՄ, յերբ դասակն հնարավորութեան շունի բացվելու մարտական կարգի կամ պաշտպանութեան համար դրավելու տեղական հարմար առարկա, նա դիմավորում և յետ ե մղում գրոհը գնդացիների, հրացանների և ձեռքի ու հրացանային նռնակների կրակով, նույնպես և սրագնով:


Հեծելազորի հանկարծակի գրոհը յետ մղելու համար սահմանված շարքերը բավական հուսալի յեն. միայն հետևյալի մանր ստորաբաժանումների համար (ջոկ, դասակ) նաև այն հակառակորդի վերաբերմամբ, վորը գրոհում ե հեծյալ շարքում,

յեթե այդ գրոհին չեն ոգնում գնդացրային կամ շահել մարտական կարգի բացվելու համար:

Հեծելազորի գրոհը, վորին ոգնում են գնդացրերը կամ ձիաթափված գորամասերը, հանդիսանում ե նրա մղած մարտի նորմալ տեսակը: Ուստի սահմանված կարգերը պետք ե կիրառել վորպես առաջին և արագ անցնող ետսպ գրոհող հեծելազորին հակադրելու համար, նպատակ ունենալով խուճապը կանխել և վորոշ ժամանակ շահել մարտական կարգի բացվելու համար:

132. ԴԱՍԱԿԸ ԲԱՌԱՇԱՐ ՍՅՈՒՆՈՎ ՇԱՐԺԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ.

ա) «ՀԵԾԵԼԱԶՈՐԸ ՃԱԿԱՏԻՑ» հրամանով: Դասակը կանգ ե առնում: Առաջին շոկը մնում ե տեղում, յերկրորդը վազում ե դեպի աջ, առաջինի գծի վրա. յերկու շոկն ել, արագ պատրաստվելով, կրակ են բաց անում: Հինգերորդը շոկը վազով շարժվում ե մի տողան առաջին և յերկրորդ շոկերի գծի վրա (առաջինից դեպի ձախ) և հրաձգութեան համար ընդունում ե ծնկից դրութեանը, յեթե հարկավոր ե, կեռելով թեվը: Չորրորդը շոկը շարվում ե հինգերորդի յետևվում, իսկ յերկրորդը—առաջինի և յերկրորդի յետևվում կամ սրանցից աջ. յերկուսն ել հրաձգութեան համար կանգնած դրութեամբ են (յեթե յերրորդը շոկը շարվում ե յերկրորդից աջ, այդ դեպքում ծնկից դրութեան մեջ,—(գծանկ. 22): Հրաձիգ շոկերը կրակ են բացում, դասակի հրամատարի կամ շոկերի հրամատարների հրամանով:



Գծանկ. 22. Հրածիզ դասակի քառաշար սյունից շարափոխությունը ճակատից գրոնող հեծեկազորին յետ մղելու համար:

բ) «ՀԵԾԵԼԱԶՈՐԸ ԹԻԿՈՒՆՔԻՑ» հրամանով:

Դասակը կանդ է առնում և յետ և դառնում: Չոկերն ընդունում են նույն դրությունը, ինչ վար հեծեկազորը ճակատից յետ մղելու ժամանակ, միայն շուռ ամբ թեկերով:

դ) «ՀԵԾԵԼԱԶՈՐՆ ԱԶԻՑ» հրամանով:

Յերրորդ, չորրորդ և հինգերորդ Չոկերը դառնում են դեպի աջ և ընդունում են հրաձգության համար դրությունը. յերրորդն և չորրորդը ծնկից, իսկ հինգերորդը—կանգնած: Առաջին Չոկը վազում է առաջ և տեղափոխվում է չորրորդ Չոկից ձախ, իսկ յերրորդ Չոկը վազում է յետ և տեղափոխվում է չորրորդ Չոկից աջ: Առաջին և յերրորդ Չոկերը, բռնելով իրենց տեղերը, անմիջապես կրակ են բաց անում (գլծանկ. 23):



Գծանկ. 23. Հրածիզ դասակի քառաշար սյունից շարափոխությունը աջից գրոնող հեծեկազորին յետ մղելու համար:



Գծանկ. 24. Հրածիզ դասակի քառաշար սյունից շարափոխությունը ձախից գրոնող հեծեկազորին յետ մղելու համար:

դ) «ՀԵԾԵԼԱԶՈՐՆ ՉՍԿԻՑ» հրամանով,

Յերրորդ, չորրորդ և հինգերորդ Չոկերը դառնում են դեպի ձախ ընդունում են հրաձգության համար դրությունը, հինգերորդը—ծնկից, իսկ չորրորդն և յերրորդը—կանգնած: Առաջին Չոկը վազում է աջ, իսկ յերրորդը, չորրորդ Չոկից ձախ և կրակ է բացում (գծանկ. 24):

133. ՉՈՒԳԱՇՍԻ ՍՅՈՒՆՈՎ ԴԱՍԱԿԻ ՇՍԺՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ:

ա) «ՀԵԾԵԼԱԶՈՐԸ ՃԱԿԱՏԻՑ» հրամանով:


Առաջին Չոկը շարվում է տեղում, յերրորդը նրանից աջ և անմիջապես կրակ են բաց անում: Յերրորդ Չոկը շարվում է առաջինից ձախ և ընդունում է հրաձգության համար ծնկից դրությունը: Չորրորդը շարվում է դեպի աջ,

իսկ հինգերորդը—դեպի ձախ, վագերով և կիս
մոտենալով առաջին տողանին, և հրաձգության
համար ընդունում ե կանգնած դրություն
(դժանկ. 25):

բ) «ՀԵՇԵԼԱԶՈՐԸ ԱՁԻՑ» հրամանով:

Ամբողջ դասակը դառնում ե դեպի աջ: Ա-
ռաջին և յերկրորդ ջոկերը կրակ են բացում.
չորրորդ ջոկն ընդունում ե հրաձգության համար
ծնկից դրությունը, իսկ յերրորդ և հինգերորդը
—կանգնած:

դ) «ՀԵՇԵԼԱԶՈՐԸ ԱՁԻՑ» հրամանով: Դա-
սակը դառնում ե դեպի ձախ: Յերրորդ ջոկը տեղ



Գծանկ. 25 Հրաձիգ դասակի զուգաշար սյունից
չարափոխությունը ճակատից դրոհող հեծելադո-
րին յետ մղելու համար:


և տալիս առաջին և յերկրորդ ջոկերին ղնդացի-
ներով կրակ վարելու և ընդունում ե հրաձգու-
թյան համար կանգնած դրություն: Հինգերորդ

ջոկն ընդունում ե հրաձգության համար ծնկից
դրությունը, իսկ չորրորդը—կանգնած:

դ) «ՀԵՇԵԼԱԶՈՐԸ ԹԻԿՈՒՆՔԻՑ» հրամա-
նով:

Դասակը դառնում ե յետ: Չորրորդ ջոկը բա-
ցվում ե դեպի ձախ, իսկ հինգերորդը—դե-
պի աջ և հրաձգության համար ընդունում ե ծըն-
կից դրությունը: Առաջին և յերկրորդ ջոկերն
արագ զրալում են չորրորդ և հինգերորդ ջոկե-
րի միջև յեղած արանքը: Յերրորդ ջոկը կանգնած
դրությամբ բացադատվում ե հինգերորդ ջոկի յե-
տևում (դժանկ. 26):

Ճակատից և թիկունքից դրոհող հեծելադո-
րին յետ մղելու համար դասակի միաշար սյունից
չարափոխությունը կատարվում ե զուգաշար



Գծանկ. 26. Հրաձիգ դասակի զուգաշար սյունից
չարափոխությունը թիկունքից դրոհող հեծելա-
դորին յետ մղելու համար:

սյունից դասակը շարժման ժամանակ շարափոխ-
վելու համար տված ցուցմունքների համեմատ,
իսկ ավելի և ձախից դրոհող հեծելադորին յիտ
մղելու շարափոխությանը հասնում են շարքը
շարժելով դեպի հրամանով ցույց տված կողմը:

134. ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԱՎՏՈՋՐԱՀԱՊԱՏ ՄԵ-
ՔԵՆԱՆԵՐԻ ՅԵՐԵՎԱՆ ԳԱՒՈՒ ԴԵՊՔՈՒՄ դա-
սակի հրամատարը նախազգուշացնում է իրենց
դրամասերին սլաշմանական նշաններով՝ նրանց
յերեւալու մասին: Պարագայի համեմատ հնարա-
վոր միջոցներ և ձեռք առնում դեպի մեր դորքե-
րի կողմը բերող ճանապարհը կտրելու համար,
աշխատելով վերջնական հաշվով, գրահապատ
մեքենան դեւել աշնպիսի դրության մեջ, վոր նա
չկարողանա շարժվել վոր դեպի առաջ և վոր էլ
դեպի յետ:

Ձրահամեքենան մոտենարու դեպքում զնդա-
կոծել ձեռքի զնդացրերի և հրաձիգների կրակով.
գրահահար զնդակներով—մոտորի դանված տե-
ղերին, բենդինի սլահամանին և դորախմբի
դանված տեղերին, իսկ սովորական զնդակնե-
րով—ձեռքերին:

135. ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԻՆՔՆԱԹԻՌՆԵՐԻ ՅԵ-
ՐԵՎԱՆ ԳԱՒՈՒ ԴԵՊՔՈՒՄ դասակի հրամատա-
րը հրաման և տալիս «ԻՆՔՆԱԹԻՌ—ՃԱՆԱՊԱՐ-
ՀԻՑ ԱՋ (ՁԱԽ, ԱՋ ՈՒ ՁԱԽ)», նայած տեղում
յեղած ծածկարանին:

Դասակն արագ վազում է ճանապարհից
դուրս դեպի մոտակա թաքստոցը և շարունակում
է շարժումը, խուսափելով կուտակվելուց:

Յեթե ճանապարհին մոտիկ թաքստոցներ չկան,
այդ դեպքում «ԻՆՔՆԱԹԻՌ—ՃԱՆԱՊԱՐ ՀԻՑ ԱՋ և
ՁԱԽ» հրամանով, առաջին, յերկրորդ, յերրորդ
ջոկերը քառաշար սյունից արագ վազում են ճա-
նապարհից—դեպի աջ 50—60 մետր և, յեթե կան-
դաման համար ազդանշան (հրաման) չի յեղել,
շարունակում են շարժումը: Նույնն անում են
չորրորդ և հինգերորդ ջոկերը, միայն ճանապար-
հից դեպի ձախ:

Յեթե անհրաժեշտ է թաքնվել տեղում, այդ
դեպքում «ՊԱՌԿԻՐ» հրամանով, բոլորը խառը
կերպով, բայց առանց կուտակման, պառկում են
յերեսները դեպի ցած, ծածկելով գենքի և հան-
դերձանքի փայլուն մասերը, հակազագերը պա-
հերով «սպառաաս» դրությամբ:

«ՃԱՆԱՊԱՐԻՈՎ ՄԱՐՇ» հրամանը վերական-
դնում է շարժման նախկին կարգը:

3. ԴԱՍԱԿԻ ԿԱՐԳԵՐԸ

136. ԾԱԾԿՎԱԾ ՄԱՏՈՒՅՑՆԵՐ ՁՈՒՆԵՑՈՂ
ՏԵՂԱՆՔՈՒՄ, հակառակորդի հրետանու և զըն-
դացրային կրակի տակ դասակը բաժանվում է
ջոկերի:

Դասակի կարգում ջոկերի դասավորությունը
փոքրզվում է.

1) դասակի խնդրով, տեղանքով և հակա-
ռակորդի կրակով:

2) դասակի հրամատարի ջոկերի տեղում
դասավորվելու (շարժման) ցուցումներով կամ թե

չէ միջին հեռակայությունների և միջանցների ցուցումներով.

3) դասակի հրամատարի ցուցումներով հաստուկ խնդիրների և նուսաձիգների և գերազանց հրաձիգների փեղափորման մասին, յեթե դասակում աղալիսիները դատված են և առանձին խըմբակ են կազմում:

4) ջոկերի հրամատարների ինքնադործունելութեամբ, տեղանքն ու կրակն ամենալավ կերպով ողտադործելու նպատակով:

Դասակը մասնատելու համար դասակի հրամատարը ցույց է տալիս.

1) ուղղութեան և ուղղապահ ջոկը.

2) ջոկերի փոխադարձ դրութեանը և, յեթե հարկավոր է, նրանց կարգերը (չարքերը):

3) Հեռակայություններն ու միջանցները կամ տեղական առարկաները, վորոնց պետք է գրավեն ջոկերը (կամ վորոնց համեմատ չարժիեն):

Կատարումն ակալում է դասակի հրամատարի «ԲԱՅՎԻՐ» հրամանով:

Ուղղապահ ջոկի հրամանը «ՁՈԿ ԻՆՁ ՀԵՏԵՎԻՐ» հրաման տալով, առաջնորդում է նրան ցույց տված ուղղութեամբ:

Մյուս ջոկերի հրամատարները կարճ ճանապարհով իրենց ջոկերին առաջնորդում են ցույց տված ուղղութեամբ և, պահելով պահանջված հեռակայություններն ու միջանցները, շարունակում են շարժումը, համակերպելով ուղղապահի շարժման հետ, կամ կանգնեցնում են ջոկերը (հրամարվելով տեղանքին):

Հետագայում՝ յուրաքանչյուր ջոկ բացվում է իր հրամատարի նախաձեռնութեամբ յեթե դասակի հրամատարն առանձին ցուցումներ չի տվել:

Շարժումը, կանգառումները, ուղղութեան փոփոխելը, հեռակայությունների և միջանցների փոփոխութեանը, ջոկերի փոխադարձ դրութեան փոփոխութեանը կատարվում է դասակի հրամատարի համապատասխան հրամաններով (նշաններով, ազդանշաններով):

Դասակի փակվելը կատարվում է «այսինչ ջոկի համեմատ — ՓԱԿՎԻՐ (վազով)» հրամանով (նշանով կամ ազդանշանով):

Ջոկերի հրամատարներն իրենց ջոկերին առաջնորդում են այն ջոկի մոտ, վորի համեմատ կատարվում է հավաքը, և շարվում են զուգաշար սյունով:

Ծանոթութեան. — Հավաքը կարող է կատարվել նաև «ՇԱՐՎԻՐ» հրամանով:

137. ՅԵԹԵ ԴԱՍԱԿԻ ՀՐԱՄԱՏԱՐԸ ՆԱԽՈՊԵՍ ՅՈՒՅՑ ԶԻ ՏՎԵԼ ՄԱՍՆԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ, նա կարող է, ցույց տալով միայն ուղղութեանը, նա կատարել հրամանը (ազդանշանը, նշանը):

«Առաջին ջոկի համեմատ — ԲԱՅՎԻՐ» (գծանկ. 20) կամ բ «Յերրորդ ջոկի համեմատ — ԲԱՅՎԻՐ» (գծանկ. 21):

Առաջին դեպքում ուղղապահ հանդիսանում է առաջին ջոկը: Նա շարունակում է շարժումը դասակի հրամատարի հրամանով:

սակի հրամատարի ցույց տված ուղղութեամբ :
Մնացած ջոկերը դասավորվում են ինչպես ցույց
և տրված 20-րդ գծանկարում :

Յերկարդ դեպքում ուղղապահ հանդիսանում
է յերրորդ ջոկը :

138. ԴԱՍԱԿԸ ՄԱՐՏԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԲԱՑԵ-
ԼԸ կատարում է սյունից կամ մասնատված
կարգից : Բացման մոմենտը վորոշվում է
դասակին մարտական խնդիր տալով կամ հար-
տական պարագայի սահանջներով :

Զորասյունից բացման համար քառակի
հրամատարը կանչում է ջոկերի հրամատարներին
և հրաման է տալիս :

Կատարումն սկսվում է դասակի հրամատարի
Դասակ— ԲԱՑՎԻՐ» ճշանով, ազդանշա-
նով կամ հրամանով :

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Հ Ր Ա Ձ Ի Գ Վ Ա Շ Տ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ


139. ՀՐԱՄԱՆՆԵՐ ՅԵՎ ՊՍՏՎԵՐՆԵՐ ՏԱԼՈՒ
ՀԱՄԱՐ և պետին դիմավորելու ժամանակ վաշ-
տի հրամատարը մոտավորապես վարվում է դա-
սակի հրամատարին տված ցուցումների համեմատ
(հոդ. 113, 114, 120) :

Վաշտի հրամատարի և քաղաքական ղեկա-
վարի տեղը շարքերում ցույց է տրված գծանկար-
ներում :


Վաշտի հրամատարի ոգնականը շարքում
կանգնում է աջ թևում, վաշտի հրամատարի յե-
տևում մի քայլի վրա. ըստ վորում յեթե վաշտի
հրամատարը թողնում է իրեն համար շարքում
ուսմանոված տեղը, տգնականը բռնում է նրա
տեղը :

Մնացած պետերի կազմի տեղերը ցույց են
տրված գծանկարներում :


140. ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՑՈՒՄ ՎԱՇՏԻ
ՅԵՐԹԱՅՈՒՆՈՎ ՇԱՐԺՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ճշա-
նակվում է որտեղ մի հրաձիգ ջոկ ինքնաթիռ-
ների վրա կրակելու համար և յերկակի պոստ Ե-
դային դիտողութեան համար : Սրանք գնում են




Քժանկ. 27. Վաշար ըստաշար սյունով:
(Սյան խորութունը 130 քալ է):



Քժանկ. 28. Վաշար զուգաշար սյունով:
(Սյան խորութունը 175 քալ է):



Գծանկ. 29. Վաչտի դասակայունների գծաշար:
 (Վարչական դասակի բացակայության դեպքում, վաչտի
 ավազը մթերապահի և գրագրի հետ միասին շարվում են
 2-րդ և 3-րդ դասակների արանքների յետևում 5 քայլ
 հեռավորության վրա):



Գծանկ. 29ա. Վաչտի դասակայու-
 նների գծաշար գնդացրի դասակը
 յետևում:

վաչտի ընդհանուր շարքում: Դիտողը փոխվում է
 սովազի կարգադրությամբ ամեն մի ժամից հետո
 (դարդարքների ժամանակ):

Վաչտի ներքին ծառայության վերակարգը
 յերթում հետևում է վաչտի մարտական գումակի
 յետևից 5 քայլի վրա:

Վաչտի մասնատման ժամանակ, դասակների

հրամատարները յուրաքանչյուր դասակից մեկ-
մեկ կտարազներ են նշանակում վաչտի հրամատար-
րի մոտ:

141. ԴԱՍԱԿՆԵՐԻ ՇԱՐՔԵՐԻ ՅԵՎ ԿԱՐԳԵՐԻ
ԶՈՒԴԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄՎՈՒՄ ԵՆ ՎԱՇՏԻ
ՇԱՐՔԵՐԸ ՈՒ ԿԱՐԳԵՐԸ:

վաչտի շարքերը:

ա) քառաչար սյուն (յերթասյուն, գծանկ.
27):

բ) զուգաչար սյուն (գծանկ. 28):

գ) վաչտի դասակասյունների գծաչար (գծանկ.
29 և 29 ա):

դ) յերկտողյան շարք (գծանկ. 30):

Ծանոթութիւն 1. Հատուկ դեպքերում
(լեռներում գործողութիւնների ժամանակ)
վաչտը կարող և շարվել միաչար սյունով:

Ծանոթութիւն 2. Յերթասյունում վաչ-
տի և գումակի ստորարտածանումները, վաչտի
հրամատարի հայեցողութեամբ, կարող են
շարվել տարբեր համակցութեամբ: Հաստո-
ցավոր գնդացիների դասակը կարելի յե
գուրս բերել գորասյունի գլուխը:

վաչտի կարգերը:

ա) մասնատած կարգ (գծանկ. 31),

բ) մարտական կարգ (տես՝ հետևակի մար-
տական կանոնագիրքը, մասն II):

142. ՎԱՇՏԻ ՄՍՍՆԱՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ վաչ-
տի հրամատարն առաջնորդվում է հրամիգ դասա-
կի համար յեղած ցուցումներով (հոդ. 116,
117): Հարկավոր դեպքում ուղարկում է պահպա-
նութիւն և հետախուզութիւն:

2. ՎԱՇՏԻ ՇԱՐՔԵՐԸ

143. ՀԱՎԱՔԻ ՀԱՄԱՐ վաչտը սովորաբար
չարվում է դասակասյունի գծաչարով (գծանկ.
29): Շարելու համար վաչտի հրամատարը, ցույց
տալով դասակներին մեկի գորասյան գլխի ուղ-
գութիւնն ու տեղը, հրաման է տալիս:

ա) «Ըստ այսինչ դասակի»,

բ) «վաչտ դասակասյունների գծաչար—ՇԱՐ-
ՎԻՐ»:

Ծանոթութիւն. Յերթ հարկավոր է,
այլեւացնում է. «գնդացրային դասակ» կամ
«գնդացրային և վարչական դասակները յե-
տևից» (գծանկ. 29 ա):

Դասակների հրամատարները, հավաքելով
իրենց դասակները, ամենակարճ ճանապարհով
բերում են նրանց հավաքի տեղը և շարում են
ցույց տված ուղղութեամբ, համապատասխան
միջանցները պահելով հրամանով նշանակած դա-
սակին, վորի հանձնատ կատարվում է շար-
վածքը:

Յեթե հավաքի հտմար հարկավոր ե շաբվիլ յերթասյունով վաշտի հրամանատարը հրամանն ե տալիս.

ա) «Այոհինչ դասակի համեմուս.


բ) «Վաճճ յերասյուն—ԿԱԶՄԻՐ».

144. ՎԱՇՏՏԸ ՅԵՐԿՏՈՂԱՆ ՇԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

«Վաճճ յեկտղան—ԿԱԶՄԻՐ (վազով)»:


Վաշտի հրամանատարը կանգնում ե յերեք քայլի վրա շարվածքի տեղի առջևում յերեսը վաշտի ճակատի ցանկացած ուղղությամբ, անոխերը մեկնելով դեպի յերկու կողմը, վորից հետո դառնում ե դեպի վաշտը:

Դասակների և ջոկերի հրամանատարները բռնում են իրենց տեղերը շարքում, իսկ նրանց համեմատ շարվում են մարտիկները, ընդվորում 2-րդ դասակի հինգերորդ ջոկը, վորի համեմատ միջո կատարվում ե վաշտի շարվածքն ու հավա-



Գծանկ. 30. Վաշտը յերկտղան շարքում:

տարումը, կանգնում ե վաշտի հրամանատարի յետևիլում յերեք քայլի վրա (գծանկ. 30):



Գծանկ. 31. Վաշտի մասնատած կարգը:

Յերբ վաշտը շարվում ե, վաշտի հրամանատարը հրամանն ե տալիս.

ա) «Դեպի կենտրոնը (դեպի աջ, դեպի ձախ) ՀԱՎՍԱՐ».

բ) «ԶԳԱՍՏ»:
Վաշտի շարավորությունը կատարվում ե դասակի համար ցուցումի համեմատ:

145. ՅԵՐԹԻ ԺԱՄԱՆԱԿ ԻՆՔՆԱԹԻՌՆԵՐԻ ՅԵՐԵՎԱՆ ԳԱՆՈՒ ԴԵՊՔՈՒՄ.

Վաշտի հրամանատարը, տառց շարժումը դադարեցնելու, ոգտագործում ե հանդիպած թեղական առարկաները (ծառերը, ցանկապատերը, անտառի բոլորքը, թիկերը, առուները), վորպես քողարկներ սդային դիտողությունից: Յեթե այդպիսի ծածկարաններ չկան, աջ դեպքում, վաշտի հրամանատարը, հակառակորդի ինքնաթիռների յերևալու դեպքում, հրամանն ե տալիս. «ԻՆՔՆԱԹԻՌՆԵՐԻ ՅԵՐԵՎԱՆ ԳԱՆՈՒ ԶԱՆ (ԱԶ, ՉԱՆ)»:

Դասակները ճանապարհից դուրս են վազում 100 մետր աջ ու ձախ և, միմյանց միջև 100 մետր

հեռակայութիւնն պահելով, շարունակում են շարժումը:

Յեթե ինքնաթիւրը ցածրանում է, գնդացրային դասակը, վաչտի հրամատարի պատվերով դրաւում է ինքնաթիւնների վրա հրաձգութեան համար հարմար կրակային կետեր:

Վտանգն անցնելուն պես, վաչտի հրամատարի նշանով դասակները դուրս են դալիս ճանապարհի վրա և վերականգնում են շարժման նախկին կարգը:

Վաչտի դումակը շարժվում է վոստյուններով, մի թաքստոցից մյուսը:

146. ԻՆՔՆԱԹԻՈՒՅ ԳՆԴԱՅՐԱՏԻՆ ԿՐԱԿՈՎ ԳՆԴԱԿՈՒՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ, հրաձիգ դասակները, առանց շարժումը դադարացնելու, մասնատվում են ջոկերով, ընդ վորում յեթե ինքնաթիւրը դրոհում է վաչտին, 400-500 մետրից ավելի գածբանայով, շարժման սկզբին նշանակված հրաձիգ ջոկը համադարկերով կրակ է բացում ջոկի հրամատարի հրամանով: Գնդացրերը կրակ են բացում վաչտի (դասակի) հրամատարի հրամանով:

Շարժումը դադարացնելու անհրաժեշտութեան դեպքում (վաչտի հրամատարի հայեցողութեամբ կամ ընդհանուր ազդանշանով) վաչտի հրամատարը հրաման է տալիս (նշաններ է տալիս) «ԿԱՆԳԱՌ, ՊԱՌԿԻՐ» կամ «գրավել այսինչ քախտոցը»—ՎԱԶՈՎ ՄԱՐՇ»:

147. ՈՂՈՒՄ ԹՆ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՏԱՅԵՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ, վաչտի հրամատարը տալիս է ըիմիական տաղնապի նշան (ազդանշան)

«ՀԱԿԱԳԱԶԵՐՆ Ի ՄԱՐՏ», «ԳԱԶԵՐ», «ՀԱՆԵԼ ՀԱԿԱԳԱԶԵՐԸ»:

3. ՎԱՇՏԻ ԿԱՐԳԵՐԸ

148. ՎԱՇՏԻ ՄԱՍՆԱՏԱՏ ԿԱՐԳԻ ԱՆՑՆԵԼԸ կատարվում է հրաձիգ դասակի համար յեղած ցուցումների համեմատ (հոդ. 136):

Յեթե վաչտի հրամատարի կողմից ցույց տրված չի յեղել դասակների տեղափոխման կարգը, նրանց միջև յեղած հեռակայութիւններն ու միջանցները, այդ դեպքում վաչտի մասնատումը կատարվում է հետևյալ հրամանով (նշանով, ազդանշանով) .

ա) «Ուղղութեամբ այսինչ տեղը...»

բ) «Վաչտ այսինչ դասակի համեմատ—ԲԱՑՎԻՐ (վազով)»:

Անվանված դասակի հրամատարն իր դասակը տանում է քայլով (վազով) ցույց տված ուղղութեամբ: Մնացածները պահում են ՅԼ-րդ պծանը կարող ցույց տված հեռակայութիւններն ու միջանցները:

Յեթե հարկավոր է, վաչտի հրամատարը ցույց է տալիս գնդացրային դասակի տեղը:

Վաչտի հավաքը մասնատված կարգից կատարվում վաչտի հրամատարի հրամանով (նշանով, ազդանշանով) . «Այսինչ դասակի համեմատ—ՓԱԿՎԻՐ»:

Դասակի հրամատարներն իրենց դասակները բերում են հավաքի տեղը և, յեթե հատուկ պատվեր չի յեղել, շարվում են քառաչար սյունով:

Վաչտի դումակը շարվում է (տեղափոխվում է) վաչտի հրամատարի ցուցումով:

ԳԼՈՒԽ ԾՈՌԵՐՈՐԿ

ՀԱՍՏՈՑԱՎՈՐ ԳՆԴԱՅՐԻ ԶՈԿ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

149. ԳՆԴԱՅԻՐԻՆ ԻՐ ԾԵՐԿԱՆԻՎՈՎ կամ
յերկձի սայրով սպասարկում ե մի ջոկ.

Ջոկի հրամատար,

Հեռաչափող-դիրտող,

№ 1—նշանառու,

№ 2—նշանառուի ոգնական,

№ 3—փամփոշտակիբ,

№ 4 »

№ 5 »

№ 6 »

Զիավար:

Ծանոթությամբ. Գրաստա-գնդացրային
վաշտերում գնդացիին ու փամփուշտները
ջոկում տանում են գրաստներով (մեկ գրն-
դացրային և յերկու փամփոշտային):

Հրամաններ տալու համար ջոկի հրամատարը
դեկավարվում ե հրաձիգ ջոկի հրամատարի հա-
մար յեղած ցուցումներով:

150. ԾԵՐԹՈՒՄ ԾԵՎ ՄԱՐՏՈՒՄ մինչև
վերջին հնարավորությունը գնդացիին ու նրանց
մարտական փամփուշտների համալիրը՝ գնդացը-
րային ժապավեններով և արկղներով տանում են

յերկանիմներ (սայլակներ) վրա բարձած գը-
րաստներով և փոխադրական այլ միջոցներով:


Յերթում գնդացիը պետք ե պատրաստ լի-
նի արագ հաստելու և կրակ բանալու համար
ողից հակառակորդի հարձակման դեպքում:

Յեթե գնդացիը յերկանիմներով (սայլակ-
ներով), գրաստներով և այլ միջոցներով փոխա-
դրելն անհնարին և դառնում, հետագա տեղափո-
խությունը կատարվում ե ձեռքով «ակների վրա»,
«սայլակով», «ձեռքով»— հավաքած և քան-
դած ձեռքով: Այդ դեպքում համարների մի մասը
գնդացիին և տանում, մյուս մասը—
—գնդացրի ժապավեններն ու պատկանելիքները:

2. ԶՈԿԻ ՇԱՐՔԵՐՆ ԻՋԵՑՐԱԾ ՆՑՈՒԹԱԿԱՆ
ՄԱՍՈՎ ՅԵՎ ԱՌԱՆՑ ՆՐԱՆ

151. ԶՈԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԱՐՔՆ ԻՋԵՑՐԱԾ
նյութական մասով—գուգաշար սյունն ե (գծանկ.
32):

Ջոկը գուգաշար սյունով շարելու համար հը-
րաման տալ. «Ջոկ—ՇԱՐՎԻՐ»:



Գծանկ. 32. Հաստացա-
վոր գնդացիը իջեցրած
նյութեղեն մասով գու-
գաշար սյունով:

Գնդացիին ամրացրած
բաշիկով առաջին և յերկ-
րորդ համարները տանում
են իրենց յետևում աջնպես,
վար գնդացրի մարմինը
գտնվի յկրորդ և չորրորդ
համարների միջև յեղած ա-
րանքում:

Ծանոթությամբ. Յեթե քաշիկ չկա,
գնդացրիը պահում են նույն այդ համար-
ներն առատամի աղիզից բռնած:

Համարների հրացանների դրուժյունն և «վոտքիդ»:

Համարներն իրենց տեղերը պրավելուց հետո ընդունում են «զգաստ» դրուժյուն:

152 ՁՈԿԸ ՅԵՐԿԻՏՈՂԱՆ ԾԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ. «Ձուկ յերկառղան—ԾԱՐՎԻՐ»:

Ձոկը շարվում է, ինչպես ցույց է տրված 33-րդ դժանկարում, հավասարվելով հեռաչափող—դիտողի համեմատ: Վերջինս կանգնում է ջոկի հրամատարից ձախ:

Գնդացիին ամբացրած քաշիկով առաջին և յերրորդ համարները պահում են իրենց յետևում այնպես, վերնա լինի յերկրորդ և չորրորդ համարներին միջև յեղած արանքում:



Գժանկ. 33. Հաստոցավոր գնդացիին իցեցրած նյութեղեն մասով յերկուողան շարքում:

Համարները հրամանը կատարելուց հետո, ջոկի հրամատարը դառնում է դեպի ձախ և, յեթե հարկավոր է, հավասարում է ջոկը և ուղղում է գնդացիի դրուժյունը:

Չուղաչար սյունից յերկառղան շարք կազմելը և ընդհակառակը կատարվում է քառորդ շրջան դարձումով «Ձախ-ԴԱՐՁ (աջ-ԴԱՐՁ)» հրամանով: Այդ հրամաններով դարձման ժամանակ յերկրորդ համարը գնդացիին հանձնում է յերրորդին, և ընդհակառակը:

Եթե ջոկի հրամատարը գտնվում է գուռաչար սյուն շարքում, այդ դեպքում ջոկը դեպի ձախ դարձման ժամանակ նա մի քայլ է անում դեպի աջ և դեպի ստաջ, կանգնելով հեռաչափող

—դիտողից աջ: Ձոկը յերկառղան շարքով դեպի աջ դարձման դեպքում ջոկի հրամատարը մի քայլ անում է դեպի յեա և աջ:

153. ՁՈԿՆ ԱՌԱՆՑ ՆՅՈՒԹԵՂԵՆ ՄԱՄԻ գուռաչար և յերկառղան շարքը կատարվում է նույն հիմունքներով, ինչպես և նյութեղեն մասով (դժանկ. 34, 35), այն տարբերությամբ, վոր առաջին դեպքում —գուռաչար սյունով—յերրորդ և չորրորդ համարները մոտենում են համապատասխան կերպով առաջին և յերկրորդ համարներին, մեկնած ձեռքի հեռահայտությամբ, իսկ յերկառղան շարվելու ժամանակ այդ նույն համարներն իրենց արժունակների միջև պահում են ձեռքի ափի լայնությամբ միջանց:

Հրամաններ տալն ու կատարելը կատարվում են սույն կանոնագրքի IV գլխի ցուցումների հիմունքներով:

154. ՁՈԿԸ ԾԱՐԹԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ջոկի հրամատարը հրաման է տալիս.

«ՄԵՁՔԻՆ» կամ «ԲԱՇԻԿՆԵՐՈՎ» (յերկրորդ հրամանը արվում է, յեթե ջոկը հրացաններ չունի կամ արդեն պցած են ուսընդանուր): Այս հրամանով առաջին և յերկրորդ համարներն ուղղում են քաշիկները (նրանք ամբացնում են քաշիկները, յեթև նրանք արձակած են յեղել), մնացած համարները հրացանները վերցնում են «մեջքին» դրուժյամբ, բոլորը պատրաստվում են շարվելու, ընդունելով «զգաստ» դրուժյուն:

«Ձուկ ինձ հետևի՛ր քայլով (վազով)—ՄԱՐՇ», կամ յեթե ջոկի հրամատարը գտնվում է շարքից դուրս.

«Ուղղությունն այսինչ տեղը (հրամանի հետ միաժամանակ ցույց և տալիս ձեռքով անվանված ուղղությունը) — քայլով (վազով) — ՄԱՐԾ»:

Ծանոթություն. Բոլոր այն դեպքերում յերբ ջոկի հրամատարը գտնվում և շարքից դուրս ուղղապահ և հանդիսանում հեռաչափող—դիտողը:

Շարժման համար հրամանն արտասանելուց առաջ ջոկի հրամատարը յերեսը դարձնում և



Գծանկ. 34. Հաստացավոր գնդացրի ջոկն առանց նյութեղեն մասի դուրս գալար սյունով:

դեպի ջոկը, իսկ կատարողական «Մա՛րչ» հրամանից առաջ դառնում և շարժման ուղղությամբ և ամբողջ ջոկի հետ միաժամանակ սկսում և շարժումը:

Ջոկի շարժումը, ուղղության փոփոխությունը, կանգառումը, դարձումները (առանց նյութեղեն մասի) քայլելիս և տեղում, դենքը բուրդ կազմելն և դենքը վերցնելը—կատարվում և հրաձիգ ջոկի համար ցույց տված կանոնների համեմատ:

155. ՁՈԿԸ ԿԱՆԳՆԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ջոկի



Գծանկ. 35. Հաստացավոր գնդացրի ջոկն առանց նյութեղեն մասի յերկտողան:

հրամատարը հրաման և տալիս. «Ձոկ—ԿԱՆԳԱՆՔԱ՛Ռ»:
Յեթե շարժման ժամանակ ջոկի հրամատարն առաջին-յերկրորդ և յերրորդ-չորրորդ համարների միջև յեղած հեռակայություններն ավելացրել և, այդ դեպքում կանգառումից առաջ հրաման և տալիս. «ԿԱՆԳԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ»:
Այս հրամանով № № 1 և 2-ը մոտ են քաշում գնդացիրը, իսկ № № 3 և 4 պահում են նորմալ հեռակայությունը — գնդացրի ակներևից 1 քայլի վրա:
Քաշիկներն արձակելու համար, ջոկի հրամատարը հրաման և տալիս. «ԱՐՁԱԿԻ՛Ր ՔԱՇԻԿՆԵՐԸ»:

«Արձակիր քաշիկները» հրամանով № № 1 և 2-ն արագ արձակում են քաշիկները, ծալում են առատամի վրա և ընդունում են «զգաստ» դրություն:

156. ՀՐԱԶԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԴՐՈՒԹՅՈՒՆ ԸՆՏՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ջոկի հրամատարը հրաման և տալիս.

ա) «Ձոկ—ԿԱՆԳԱՆՔԱ՛Ռ»:



բ) «Նպատակն այսինչն է—ԼՅՐՈ՛Ւ»:

Նշանառուն գնդացիրը դարձնում և ցույց տված ուղղությամբ և պատրաստում կըրակ բանալու համար. № 2, տեղավորվելով նըրանից աջ, տալիս և նրան գնդացրային ժապավենը. № № 3, 4 և 5 գտնվում են թաքստոցում գնդացրի յետևում. № 6 յերկանիվի (սայլակի) կամ դրաստների (բեռների) մոտ, ավագը հանդիսանալով. ջոկի հրամատարն և հեռաչափողը—այնտեղ, փորտեղ հարկավոր են գտնում:

**Ց. ՁՈՎԻ ԾՈՐԲԵՐԸ ՆՅՈՒՅԵՂԵՆ ՍԱՍԸ ՅԵՐ-
ԿԱՆԻՎՆԵՐԻ (ՍԱՅԼԱԿՆԵՐԻ) ՅԵՎ ԳՐԱՍՏՆԵՐԻ
ՎՐԱ ՅԵՂԱԾ ԺԱՄԱՆԱԿ**

157. ԼԾԱԾ ԳՆԴԱՅՐԻ ԵՆԿԿԱՆԻՎԸ (ՍՍԹ-
ԼՍԿԸ) ԿՍՄ ԳՆԴԱՅՐԱՅԻՆ ԵՆՎ ՓՍՄ ՓՇՏԻ ԲԵՌ-
ՆԵՐԸ կազմում են շարժման միավոր «Գնդացի»:


1. Գնդացիքը յերկամիվի (սայլակի) վրա յե-
ղած ժամանակ համարները տեղափոխվում են:



Գծանկ. 36. Հաստոցավոր Գծանկ. 37. Հաստոցավոր
գնդացիքը յերկամիվի վրա: գնդացիքը սայլակի վրա:

ա) յերկամիվի վրա դրուեթյամբ յեղած ժա-
մանակ, ջոկի հրամատարը կանդնում է զնդացրի
յերկանիվի ձիուց կես քայլ ձախ և նրա դլխի
բարձրության հավասար. նրա ծոծրակի դիմաց
մի քայլ վրա կանդնում է հեռաչափողը. № 1 յեր-
կանիվի սունակի աջ ծայրից աջ կես քայլի վրա.
№ 2-ը—յերկանիվի սունակի ձախ ծայրից ձախ.
№ 3-ը № 1-ի ծոծրակի դիմաց 2 քայլ հեռակա-
յության վրա. № № 4, 5 և 6 № 3-ից ձախ և նրա
կողքին, ընդվորում № 6-ը № 2-ի ծոծրակի դի-
մաց, ձիավարը յերկանիվի նստոցի վրա (գծանկ.
36).

բ) սայլակի վրա դրուեթյամբ ժամանակ ջոկի
հրամատարը կանդնում է զնդացրի սայլակի ձախ
ձիուց կես քայլի վրա և նրա դլխի բարձրության
հավասար. նրա ծոծրակի դիմաց մե քայլի վրա
կանդնում է հեռաչափողը. № 1 սայլակի աջ կող-
մի առջևի անիվի ծայրից աջ կես քայլի վրա.
№ 2 սայլակի ձախ կողմի առջևի անիվի սունակից
ձախ կես քայլ. № 3 և № 4-ը № 1 № 2-ի ծոծրա-



Գծանկ. 38. Հաստոցավոր Գծանկ. 39. Հաստոցավոր Գծանկ. 40. Հաստոցավոր
գնդացիքը— ցավոր գնդացիքը ցավոր գնդացիքը
միաշար գրաստ- ղուգաչար գրաստ- յեռաչար գրաստ-
ներով: ներով: ներով:

կի դիմաց սայլակի յետևի սունակի գծի վրա.
№ 5 և № 6 սայլակի յետևի վահանիկից կես
քայլի վրա. ձիավարը նստում է սայլակի նստոցի
վրա (գծանկ. 37):

Ձիավարներին ձիաթափ անելու համար հրա-
ման սառ: «Ձիավարներ—իջե՛ք»: Այդ հրամա-

նով ձիւփարններն լիջնում են և ամեն մեկը կանգ-
նում է իր ձիւր (ձիւերի) առջևում :

Շարժման ժամանակ գորտայունների խորու-
թյունը կրճատելու անհրաժեշտութեան դեպքում
համարները (յերկանիվի վրա—գրութեան ժա-
մանակ № № 3, 4, 5 և 6, սայլակի վրա դրու-
թեան ժամանակ № № 5 և 6) ջոկի հրամատարի
կարգադրութեամբ կարող են շարժվել յերկանիվի
(սայլակի) կողքով :

2. Գրատուների վրա դրութեան ժամանակ,
զնդացիք բարձրում է դնդացրի գրաստի վրա,
զնդացրի ժապավենները— փամփշտի գրաստի
վրա :

Գրատուները շարժվում են միաշար, դուզաշար
և յեռաշար (զձմիկ. 38, 39 և 40) :

Համարների տեղավորութեանը կատարվում
է ինչպես ցույց է տված դժանկարներում :

4. ՇԱՐՇՈՒՄ ՅԵՎ ԿԱՆԳԱՌՈՒՄՆԵՐ

158. ԳՆԴԱՑԻՐԸ ՅԵՐԿԱՆԻՎԻ (ՍԱՅԼԱԿԻ,
ԳՐԱՍՏՆԵՐԻ) վրա բարձած շարժվում է քայլով
և բացառիկ դեպքերում— վարդով (գրատուները—
միմիայն քայլով) :

Քայլի արագութեանն է 4-5 կմ. մի ժա-
մում (1 կմ. 15-12 րոպեյում) : Հետևակ դորա-
մաների կազմում շարժվելիս շարժման արագու-
թյունը հարմարեցվում է նրանց :

Վարդի արագութեանն է 12 կմ. մի ժամում
(1 կմ. 5 րոպեյում), առանց ընդհատումի— 3 րո-
պեյից մոլ ավելի :

159. ՇԱՐՇՈՒՄՆ ՍԿՍԵԼՈՒ ՀԱՄԱՐ. «Փայ-
լով (վարդով) ՄԱՐՇ» կամ «Ուղղաւթյունն այս-
ինչ տեղն, քիչ, ՄԱՐՇ» :

Շարժումն սկսելու հետ ձիւփարը վերցնում
է ցույց տված ուղղութեանը և շարժվում է նշու-
նակված քիչքով :

Ջոկի հրամատարը և համարները շարժվում
են դժանկարներում ցույց տված վարդով :

Ջոկի հրամատարը, վորն առաջնորդում է
զնդացիքը, հետեւում է առջևում ընկած տեղաւե-
քին, շրջանցում է արդելներն և անհրաժեշտու-
թեան դեպքում, զնդացիքը (սայլակը) արագ
կանգնեցնելու համար բարձրացնում է աջ ձեռ-
քը :

Ձիւփարների ուղղութեանը դրաձելու հա-
մար դեպի շարժման ճանապարհը հրաման տույ
«ՅԱՍ ՆԱՑԻՐ» :

Քիչը մեծացնելու համար. «վարդով ՄԱՐՇ» :

Քիչը փոքրացնելու, — «ԲԱՑԼՈՎ» :

Գնդացիքը կանգնեցնելու համար. «գնդացիք
ԿԱՆԳ ԱՒ» :

Մեկ քիչից մյուսին անցնելը և կանգառում-
ները կատարվում են սահուն փերպով. նախկին
քիչքով 3—6 քայլ անելով :

Գնդացիքը հավասարեցնելու համար «գնդա-
ցիք, ՀԱՎՍԱՐ» :

Ջոկի հրամատարը դուրս է դալիս Յ քայլ դե-
պի առաջ և կանգ է առնում : Ձիւփարն (ձիւ-
պանը) առաջ է շարժում յերկանիվը (սայլակը,
գրաստը) և համասարում լուծքը ջոկի հրամա-
տարին :

տարի համեմատ, Համառոտորումն անարտեսկուց հե-
տո ջոկի հրամատարը հրամանն և տալիս.
«ԶԳԱՍՏ»:

**160. ԳՆԴԱՅԻՒ ԾԱՐԺՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՆ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ** կատարվում է.

ա) քառորդ շրջան դարձումով և յեռ-դար-
ձումով (կես շրջան).

բ) Թևի շրջումով ամեն մի անկյան չափով:
Դարձումի համար հրաման տալ. «Ինպի աջ
(ձախ)» կամ «ճեպի աջ (ձախ) յետ—ՄԱՐՇ»:

Թևի վրա շրջումների համար հրաման տալ.
«ԱԶ (ՉԱԿ) ԹեՎն ԱՌԱԶ—ՄԱՐՇ»:

Պահանջված ուղղությամբ զուրս գալուն
պես, հրաման տալ. ԱՌԱ՛Ձ» և «ուղղաթյունն
այսինչ տեղը»: Այս հրամանով ձևավարը զնդա-
ցիբը շարժում է ցույց տված ուղղությամբ:

Դարձում կամ շրջում կատարելու համար,
ջոկի հրամատարը շարժվում է ցույց տված կող-
ժը 6 քայլ շտապիղ ունեցող աղեղով: Դժվարանց
գետին յեղած դեպքում և վարդով շարժման ժա-
մանակ դարձման (շրջման) շտապիղը պետք է
սպիչացնել:

Գնդացրի յերկամիվի (սայլակի) ձևավարը
կատարում է դարձումը (շրջումը) ցույց տված
ուղղությամբ, համակերպվելով ջոկի հրամատա-
րի շարժման հետ:

Դարձումը (շրջումը) տեղից սկսվում է նա-
խադես 3 քայլ ուղղակի ուղղությամբ անցնե-
լուց հետո:

161. ԳՐԱՍՏՆԵՐՈՎ ԾԱՐԺՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ,

յեթե ճանապարհը բավական լայն է, դրաստները
կարող են զնալ զուգաշար (յերկերկու), յեռա-
շար (յերեք-յերեք), կողք-կողքի, վորի համար,
յեթե նրանք դասավորված են մի մի դրաստ, հը-
րաման տալ. «գրաստնի՛ր, զուգաշար, (յեռաշար)
ՄԱ՛ՐՇ»:

Կատարողական հրամանով զնդացրի դրաստը
սկսում է կամ շարունակում է շարժումն ուղիղ
տառը. № 1 փամփշտի դրաստն արագացրած քայ-
լով շարվում է զնդացրային դրաստից դեպի
ձախ. № 2 փամփշտի դրաստը մոտենում է զնդա-
ցրային դրաստին 2 քայլ հեռակայությամբ, յերկ-
րորդ դեպքում (յեռաշար) կանգնում է № 1 փամ-
փշտի դրաստից դեպի ձախ: Գրաստները զուգա-
շար կամ յեռաշար շարժման ժամանակ, համար-
ները գնում են իրենց դրաստների կողքերից հա-
մաձայն 39 և 40 դժանկարների:

**5. ԳՆԴԱՅԻՐԸ ՅԵՐԿԱՆԻՎԻՑ (ՍԱՅԼԱԿԻՑ) ԻՋԵ-
ՑՆԵԼԸ ՅԵՎ ԿՐԿԻՆ ԻՐ ՏԵՂԸ ԴՆԵԼԸ**

162. ՅԵՐԹԱԿԱՆ ԿԱՐԳԻՑ ՄԱՐՏԱԿԱՆ

ԿԱՐԳԻ անցներուն սովորաբար նախորդում է դըն-
դացիին ակների վրա տեղափոխելը ծածուկ շարժ-
վելու և զնդացիը դիրքում գնելու համար:

Գնդացիին իջեցնելու համար, հրաման տալ.
«Գնդացի՛ր ԿԱՆՅԱ՛Ռ (յեթե շարժվելիս է
յեղել):

«Իջեցնել գնդացիը, վերցնել այսֆան տուփ».
Համարներն իջեցնում են զնդացիը և
վերցնում են նշանակված ճանաչով զնդացրի ժա-

պաճենները յերկանիվից (սայլակից, գրաստից) և ընդունում են 32-րդ գծանկարում ցույց տված գրությունը, իսկ յերկանիվը (սայլակը, գրաստենքը) յետ և քաշվում իրեն ցույց տված ծածկաբանի յետևը:

Յեթե նախատեսվում և անմիջապես դիրք բռնել կրակ վարելու համար, ջուկի հրամատարը հեռաչափողի և նշանառուի ողնականի հետ գլուխում են գնդացրի համար դիրք ընտրելու, ճանապարհին նշելով գնդացրի գնալու ճանապարհը:

163. ԳՆԴԱՑԻՐԸ ՍԱՅԼԱԿԻՑ (ՅԵՐԿԱՆԻՎԻՑ) ԻՋԵՑՆԵԼՈՒՑ ԺԱՄԱՆԱԿ ՈՒ Ձ 1, 2, 3 և 4 բրեզենտի կոճակներն արձակում են և բրեզենտը վերցնում են սայլակի վրայից:

№ 6 յետ և գցում սայլակի վահանը:

№ 1, բարձրանում և սայլակի վրա, յեթե հարկավոր և, ազատում և—փոկերը, նրան յետ և գցում հաստոցի սունակից և բռնում և գնդացրի ծոծրակալի բռնատեղերից:

№ 2 և 3, կանգնելով սայլի յետևը յերեսը դեպի գնդացիրը, վերցնում են այն անիվների վերևից և քաշում են դեպի իրենց:

№ 4. պահում և գնդացիրը պատյանի սուղեվի մասից:

Գնդացիրը նորից գետնին դնելու համար № 2 և 3 յուրաքանչյուրը մի ձեռքով բռնում և ծոծրակալի բռնատեղերից, միաժամանակ մյուս ձեռքով շարունակելով պահել գնդացրի անիվը վերևից:

№ 5 և 6 ծալում են բրեզենտը և ծածկում են վահանը:

164. ԳՆԴԱՑԻՐԸ ՅԵՐԿԱՆԻՎԻՑ (ՍԱՅԼԱԿԻՑ) ԻՋԵՑՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ գնդացրորդները համարների կարգով հանում են.

№ 3 առաջը պահունի մասերով, պատկանելիքը և 2 փամփշտատուներ,

№ 4 և 5 մնացած փամփշտատուները հրամանով վորոշված քանակով:

Այս գնդացրորդները գնդացիրը և փամփշտաները ձեռքերին ջուկի հրամատարի հրամանի համաձայն շարվում են դեպի կրակային կետը, սզավելով թաքուն մատուցներից և հարմարվելով տեղանքին:

Յերկանիվ (սայլակը) մնում և տեղում կամ յետ և տանում № 6, դեպի ցույց տված տեղը:

165. ԳՆԴԱՑԻՐԸ ՅԵՐԿԱՆԻՎԻ (ՍԱՅԼԱԿԻ) ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ հրաման տալ.

«ՅԵՐԿԱՆՎԻ (ՍԱՅԼԱԿԻ) ՎՐԱ»:

Այդ հրամանով գնդացիրն ու փամփշտատուները տանում են մոտ բերած սայլակի (յերկանիվի) մոտ:

№ 6 յետ և գցում յերկանիվի (սայլակի) վահանը:

Գնդացիրը դնում են թափքի յերկարությամբ, փողաբերանը դեպի յետ, յեթե հարկավոր և տակն են ծալում առատամբ:

Նշանառուի ողնականը և փամփշտակիները (№ 3) կանգնում են գնդացրի աջ և ձախ կողմերին և վերցնում են նրան միաժամանակ առատամից և անիվներից (ամեն մեկն իր կողմից):

Փամփշտակիները (№ 4) բռնում և գնդացիրը պատյանի սուղեի մասից:

Բոլոր յերեքն եւ բարձրացնում են զնորագրեալսն,
և դնում են յերկանիւի (սայլակի) վրա:

Նշանառուն յերկանիւի (սայլակի) վրա
կանգնած, ընդունում ե մոտ բերած զնորագրին ու
նետեղում ե այն:

Փամփշտակիրները (№№ 5 և 6) դուրսը դար-
ակուց հետո ծածկում են վաճանք:

Նշանատուն հազցնում ե շտապիկը, վորից հե-
տո յերկանիւի վրա (սայլակը) ծածկվում ե բրեզնե-
տով (№ № 5 և 6):

Համարները բռնում են իրենց տեղերը 36 և
37 գծանկարների համաձայն:

6. ԳՆԴԱՑԻՐԸ ԳՐԱՍՏՆԵՐԻՑ ԻՋԵՑՆԵԼՆ ՈՒ ԲԱՐՁԵԼԸ.

166. ԳՐԱՍՏԱԲԵՌՆԵՐԻՑ ՄԱՐՏԱԿԱՆ ԿԱՐ- ԳԻ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

«Գնդացիք—ԿԱՆԳԱՌ», (յիթե նա շարժվելիս
և յեղել), իշեցնել զնորագիրը, վերցնել այսօրան
տուփ»:

№ № 1 և 2, վերցնելով քաշիկները, լջեցնում
են հաստոցը բեռից և դնում են այն գետնին, նա-
խապես ուղղելով առատամբ:

№ 3 հանում ե փամփշտատուփերը և պահուելի
մասերի տուփը գնդացրի բեռից. № № 4 և 5 փամ-
փշտի բեռից հանում են — ամփշտատուփերը, հը-
րամանով վորոշված քանակով:

Յերկրորդ փամփշտի բեռան ձիավարը, յիթե
գրաստները շարժվում եյին միաշար կամ գուղա-
շար, կանգնում ե իրեն դրաստով փամփշտի № 1

դրաստից դեպի ձախ և № 3-ից ընդունում ե նրա
ձին:

Յիթե գրաստները շարժվում են գուղաշար
կամ յեռաշար, այդ դեպքում համարների հարմար
դորձունեյության համար գնդացրի գրաստը
շարժվում ե յերեք քայլ առաջ, իսկ փամփշտի
գրաստների ձիերը մի փոքր հեռացվում են իրա-
րից: Համարներն ընդունում են դժանկ. 32-ում
ցույց տված դրությունը:

167. ԳՆԴԱՑԻՐԸ ԲԱՐՁԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

«Գնդա յիքը—ԳՐԱՍՏՆԵՐԻ ՎՐԱ»:

Դրաստները մոտենում են գնդացրին կամ
գնդացիի մոտենում են գրաստներին: № № 1
և 2 բարձում են գնդացիի, № 3 դնում ե դըն-
դացրի գրաստի վրա տուփը պահուելի մասերով
փամփշտատուփին և պատկանելիքը: № № 4 և 5
բարձում են փամփշտատուփերը փամփշտի դը-
րաստի վրա:

Բեռնելը վերջացնելուց և բեռները զննելուց
հետո ջոկի հրամատարը հրաման ե տալիս.

«Գրաստներ, միաշար (գուղաշար, յեռա-
շար)»—«ՀԱՎՍԱՐ»:

«ԶԴԱՍ»:

168. ԿՐԱԿ ԲԱՆԱԼՈՒ ԱՆՀՐՄԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԴԵՊՐՈՒՄ անմիջորեն յերկանիւիների (սայլակ- ների) վրա շարժման համար կարգից, հրաման տալ, «ԼՅՅՈՒ», «Ինպի աշ (ձախ) յետ»:

Յերկանիւի վրա (սայլակը) դառնում ե և կանդ ե
տանում (յիթե հարկավոր ե): Գնդացրի յերկա-
նիւի ձիավարը ցած ե թողում նրանից և պահում
ե ձին:

Փամփշտակիրները (№ № 3 և 8) արձա-
կում են յերկանիվի (սայլակի) բրեզենտը, վերց-
նում են այն և դնում են մի կողմ, մնում են յեր-
կանիվի (սայլակի) ձախ կողմում:

Նշանառուն արագ բարձրանում է յերկանիվի
(սայլակի) վրա, հանում է գնդացրի շապիկը,
յեթե վերջինս հազցրած է յեղել, անջատում է
գապանակը և գնդացիրը պատրաստում է կրակ
բանալու համար:

Նշանառուի ողնականը հանում է փամփշտա-
տուլիերից մեկը և դնում է այն ընդունարանի դի-
մաց, գնդացրի աջ կողմում, յերկանիվի հատա-
կին (սայլակում մյուս տուփերի վրա վերևի բաց
արկղի մեջ):

Զոկի հրամատարը հեռաչափողի հետ միասին
գտնվում են գնդացրի մոտ այնտեղ, վորտեղից
հարմար է գեկավարել կրակը և համարների աչ-
խատանքը:

№№ 3 և 4 հեռանում են, մնալով յերկանիվի
աջ կողմում:

7. ԳՆԴԱՅՐԻ ՁԵՌՔՈՎ ՏԵՂԱՓՈՒՈՒԹՅՈՒՆԸ

169. ՄԱՐՏՈՒՄ ԱՎԵԼԻ ԼԱՎ ԹԱՔՆՎԵԼՈՒ
և անտեղի կորուստներից խուսափելու համար
անհրաժեշտ է վազելագոց կատարել մեկ-մեկ կամ
ամենափոքր խմբակներով, որինակ՝ ջոկի հրա-
մատարն առաջինն է վազում այն տեղը, վորը նը-
շանակված է գնդացրի համար դասակի հրամա-
նատարի կողմից կամ ընտրված է իրեն կողմից.
նրա յետևից—հեռաչափող-դիտողը. ապա № 2-ը

փամփշտատուփերով, պատրաստելով գնդացիրը
դնելու տեղը (նա կրակ է բացում գնդացիրը
նոր տեղը հասնելուն պես): Մնացած գնդացրորդ-
ները գնդացիրը և փամփշտատուփերը ձեռքե-
րին վազելագոց են անում ջոկի հրամատարի նը-
շանով (հրամանով):

170. ԳՆԴԱՅՐԻՆ «ԱԿՆԵՐԻ ՎՐԱ» ՁԵՌՔՈՎ
ՏԵՂԱՓՈՒՈՒՄԻ ՀԱՄԱՐ ՀՐԱՄԱՆ ՄԱՅ.

«ԱԿՆԵՐԻ ՎՐԱ»:

Այդ հրամանով նշանառուն սեղանը յետ է
քաշում մինչև դեմ առնելը. գնդացրի լցամասը
իջեցնում է կուպիտ նշանառության միացնող գըն-
դերիթը տեղափոխելով, քարշերի վերևի ծակերը
վերամբարձ մեխանիզմի և թափանցակի պտույթե-
լով. աջ ձեռքով բռնում են առատամի աղեղից և
գնդացիրը դարձնում է առատամը դեպի առաջ:

Նշանառուի ողնականը (յեթե նշանառուի ող-
նականը ջոկի հրամատարի յետևից տեղափոխվել
է նոր տեղը, այդ դեպքում № 3), յերբ նշանա-
ռուն շարժման համար դարձնում է գնդացրին ա-
ռատամը դեպի առաջ, բռնում է ձախ ձեռքով
առատամի ձախ աղեղից կամ ամրացնում է քա-
շիկները: Այն դեպքում յերբ շարժման պատ-
րաստվելուց առաջ հրաձգություն է կատարվել,
նշանառուի ողնականը նախապես յետ է պտուտա-
կում շոգետար աղիքը, յեթե այդ պտուտակված է
յեղել, ծածկում է շոգետար խողովակը և հազ-
ցնում է բերնակալի թասակը:

№ 3, 4 և 5 տանում են փամփշտատուփերը,
պահունի մասերով, յուղն և ջուրը:

Մեն հետազոտութեամբ տեղափոխութեան
ներ կատարելու ժամանակ պետք է զնդարցրի հա-
մարներն փոխել:

Ո՞ր և ձևովարք մնում են յերկանիվի (սայ-
լակի, գրաստների) մաս:

171. ԳՆԴԱՑԻՐԸ «ՁԵՌՆԱՍՍՅԱԿՈՎ» ՏԵ-
ՏԵՆԱՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ Հրաման տալ
«ՍԱՑԼԱԿՈՎ»:

Այս հրամանով նշանառուն և նրա ոգնականը
(կամ թիվ 3) կատարում են 170-րդ հոդվածում
ցույց տվածը, բայց զնդարցիրը տեղափոխում են
հետևյալ ձևով, նշանառուն վերջնում է առատա-
մի ձախ աղելից, նշանառուի ոգնականը (կամ
թիվ 3-ը) — աղից և զնդարցիրը շարժում են փոխարե-
րանը դեպի առաջ:

Մնացած համարները կատարում են 170-րդ
հոդվածում ցույց տվածը:

172. ՁԵՌՔՈՎ ԳՆԴԱՑԻՐԸ ՀԱՎԱՔՎԱԾ ՎԻ-
ՃԱԿՈՒՄ ՏԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ Հրաման տալ:
«ՁԵՌՔՈՎ»:

Այս հրամանով նշանառուն յերկու ձեռքով
վերջնում է զնդարցիրն առատամից, նրա ոգնակա-
նը (կամ թիվ 3) ձախ ձեռքով աջ անվից, իսկ հե-
տաջափողն աջ ձեռքով ձախ անվից, միաժամա-
նակ բարձրացնում են այն և տանում են զնդար-
ցիրն առաջ:

173. ՁԵՌՔՈՎ ԳՆԴԱՑԻՐԸ ՔԱՆԴՎԱԾ ՎԻ-
ՃԱԿՈՒՄ ՏԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ Հրաման տալ:
«Ձառել գնդարք»:

«ՁԵՌՔՈՒՆ»:

Առաջին հրամանով նշանառուն և նրա ոգնա-
կանը դատում են զնդարցրի թունը հրաձգական
գործի հրահանգի մեջ բաղադրված կանոնների
համաձայն:

Յերկրորդ հրամանով նշանառուն վերջնում է
հատուցն այն կանոնների համաձայն, վորոնք
ցույց են տրված զնդարցիրը «ձեռնատարակով»
կամ «աղիներով» տեղափոխության համար. նը-
շանառուի ոգնականը (կամ թիվ 3-ը) վերջնում է
զնդարցրի թունը և տանում ինչպես իրեն հարժար
է. հետաջափողը տանում է վահանը:

Ց. ԳՆԴԱՑՐՈՐԳՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՐՏՈՒՄ

174. ՁՈՒԻ ՀՐԱՄԱՏԱՐԸ պատարիանատու
յն զնդարցրի սարքին դրուիթյան և անարդել գոր-
ծելու պատրաստութեան համար յերթում և մար-
տում:

Նա պարտավոր է.

ա) ծածուկ սանել զնդարցիրը ցույց տված
կամ ընտրած դիրքը, հարժար տեղ ընտրել զըն-
դարցիրը տեղափոխելու և կրակ վարելու համար.

բ) կրակ բանալուց առաջ ճիշտ վորոշել զըն-
դարի ժաման հիմական և լրացուցիչ սեկտորը (հա-
տանը), առաջ շարժված իր դորամասերին հար-
